Տարեկան հաշվետվություն 2021

Աջակցելով Հայաստանի լուսավոր ապագային

IDeA-ն Հայաստանում գրանցված շահույթ չհետապնդող բազմապրոֆիլ բարեգործական հիմնադրամ է: Մեր նպատակն է իրականացնել ու աջակցել տնտեսական, սոցիալական և մշակութային երկարաժամկետ ծրագրերին՝ ուղղված Հայաստանի և հայկական ինքնության ամրապնդմանն ու բարգավաճմանն ամբողջ աշխարհում, ինչպես նաև օժանդակել սոցիալական ազդեցության համաշխարհային այլ նախաձեռնություններին:

Նամակ տնօրենից

Հարգելի ընթերցող,

Մեծագույն հաճույքով Ձեր դատին եմ հանձնում IDeA բարեգործական հիմնադրամի 2021 թվականի տարեկան հաշվետվությունը:

Այս զեկույցն անդրադառնում է 2021 թվականին IDeA-ի աջակցած որոշ նախագծերին, ինչպես նաև դրանց ազդեցությանը Հայաստանում և ամբողջ աշխարհում: Դա ամրապնդում է մեր հպարտությունը, քանի որ մենք առնչություն ունենք մեր գործընկերների քրտնաջան աշխատանքի և հաստատակամության հետ՝ Հայաստանի և ամբողջ աշխարհի բարգավաճմանն ուղղված նրանց մշտական ձգտման գործում:

2020 թվականը դժվարին տարի էր բոլորի համար. ոչ պակաս դժվար էր նաև 2021 թվականը: Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) 44-օրյա պատերազմի և COVID-19 համավարակի հետևանքների վերացմանն ուղղված հարցերը գերակշռում էին մեր գործընկերների ծրագրային աշխատանքներում: Հետևաբար, 2021 թվականին IDeA-ն իր աջակցության մեծ մասն ուղղեց մարդասիրական ծրագրերին, մասնավորապես՝ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության շրջանակում իրականացվող նախագծերին: Այս հարթակն իսկապես արդարացրել է իր առաքելությունը՝ մարդասիրության լույսը սփռելով աշխարհի այն անկյուններում, որտեղ մարդիկ բախվում են մութ իրականությանը: «Ավրորայի» գործունեության հիմքում ընկած «Երախտագիտությունը՝ ի գործ» գաղափարը 2021 թվականին ևս մեկ անգամ ամբողջական շրջապտույտ է կատարում:

Չնայած ամբողջ տարվա ընթացքում հրատապ մարդասիրական օգնության անհրաժեշտությանը՝ IDeA-ն կարողացավ իր ծրագրային աջակցության մեջ պահպանել բազմազանությունը:

Որպես մեր երկարաժամկետ ազդեցության ռազմավարության մաս՝ մենք աջակցություն ցուցաբերեցինք «Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի» (FAST) նորարարական և հեռանկարային աշխատանքին, մասնավորապես՝ ADVANCE դրամաշնորհային ծրագրին, որն առաջարկում է STEM կրթաթոշակներ նորահայտ տաղանդների համար:

Քանի որ համավարակն ավելի տեսանելի դարձրեց վստահելի և արդյունավետ առողջապահական համակարգերի անհրաժեշտությունը, IDeA-ն նաև համահիմնեց ՀԵՆԱՐ հիմնադրամը՝ աջակցելով Հայաստանի առողջապահական էկոհամակարգի վերափոխմանն ուղղված ջանքերին: Զուգահեռաբար, կրթության ոլորտում IDeA-ն հպարտ է ոչ միայն Դիլիջանի միջազգային քոլեջի հետ գործակցությամբ, այլև վերջերս հիմնված «Մատենա» առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոցին աջակցությամբ, որը կարևոր քայլ է Հայաստանում կառավարման տաղանդի բացահայտման գործում:

Հայկական մշակութային ժառանգության պահպանման գործում IDeA-ի ձգտումը դրսևորվել է «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի հետ շարունակական գործակցությամբ, ինչպես նաև այնպիսի նախագծերին աջակցությամբ, ինչպիսին է BOLOROV-ը: Սա հարթակ է, որը համախմբում է նրանց, ովքեր ցանկանում են պահպանել ազգային հավատքը, մշակույթը և ճարտարապետությունը՝ այն նախագծերի ու նախաձեռնությունների միջոցով, որոնք հենց տեղում են իրականացվում:

2021 թվականին մեր հիմնադրամն աջակցել է նաև ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին, որոնք իրականացվել են մեր գործընկեր Զբոսաշրջության և քաղաքաշինության հիմնադրամի (TUF) կողմից: Կենտրոնացած լինելով Դիլիջանի ենթակառուցվածքների զարգացման և Գյումրու Բարեկամության այգու կառուցման ուղղությամբ՝ հիմնադրամի նախաձեռնությունները ոչ միայն այս քաղաքներն ավելի գրավիչ կդարձնեն զբոսաշրջիկների համար, այլև զգալի օգուտ կբերեն տեղի բնակիչներին, ինչն էլ հենց IDeA-ի հիմնական նպատակն է:

Միևնույն ժամանակ, Climate Uturn նախագծին մեր աջակցությունը նպատակ ուներ մեծացնելու այս բնապահպանական հարթակի կարողությունները՝ օգնելու Հայաստանի փոքր քաղաքների երեխաներին և երիտասարդներին իրենց համայնքները դարձնել էկոլոգիապես ավելի կայուն:

Այս և մնացած այլ նախագծերն այն ամենն են, ինչով IDeA-ն հպարտանում է աներևակայելի կերպով: Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր բոլոր գործընկերներին՝ անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու ճանապարհին այդքան քրտնաջանորեն աշխատելու համար. աշխատանք, որն իրապես կայուն, բարգավաճ և լուսավոր Հայաստան ստեղծելու մեր ընդհանուր նպատակին հասնելու համար է:

IDeA-ում մենք խորապես հավատում ենք ուժերի համախմբմանն ու նախագծերին աջակցմանը, որոնք փոխում են լանդշաֆտը, փոխում են մտածելակերպն ու վստահություն ներշնչում: Նմանօրինակ ազդեցությունը վստահություն է ներշնչում ապագայի հանդեպ. վստահություն, որն անհրաժեշտ է Հայաստանի բարգավաճման ու հզորացման համար: Սա մեր մեծ Գաղափարն է. գաղափար, որը մենք 2021 թվականից տանելու ենք 2022 թվական:

Ես խոնարհաբար երախտագիտություն եմ հայտնում ձեզ՝ մեր պատմությամբ կիսվելու համար:

Հարգանքով՝

IDeA հիմնադրամի տնօրեն

Արմեն Մինասյան

IDeA-ի տեսլականն ու առաքելությունը

IDeA-ն արդար ու կայուն աշխարհի տեսլականի արդյունքն է. աշխարհ, որտեղ Հայաստանը փայլում է ինչպես հաջողակ ու առաջադեմ փարոս՝ խթանելով համամարդկային բարգավաճումը: IDeA-ն այս երկրի ու այս ժողովրդի համար կանխատեսում է խոստումնալից ապագա, որտեղ հայերը ճանաչված կլինեն իրենց անգնահատելի ավանդի համար՝ համաշխարհային մշակութային, գործարար ու տեղեկատվական բնագավառներում:

Այս նպատակներին հասնելու համար IDeA-ն կիրառում է տարատեսակ գործիքակազմ: Գործնականում սա նշանակում է, որ մենք առաջարկում ենք կազմակերպչական աջակցություն, խորհրդատվություն և ֆինանսավորում նրանց, ովքեր ջանում են ստեղծել կայուն էկոհամակարգեր, որտեղ ծաղկում են սոցիալական ձեռներեցությունն ու բարեգործությունը: Սա կարող է ներառել հանգանակություններ, հաղորդակցություն և «սոցիալական» կառավարման աջակցություն՝ ընտրված նախագծերի համար: Այն նաև ներառում է մշակում և աջակցություն այն նախաձեռնություններին, որոնք գործողության մեջ են դնում սոցիալական էվոլուցիոն փոփոխությունները և առաջարկում են գլոբալ խնդիրների լուծում՝ զրոյից:

Ոգեշնչված լինելով Ռուբեն Վարդանյանի, նրա ընտանիքի, ընկերների և ամբողջ աշխարհից հարյուր հազարավոր աջակիցների գործունեությամբ՝ IDeA-ն և նրա գործընկերներն արդեն կյանքի են կոչել 700 երկարաժամկետ նախաձեռնություններ:

Իր ներգրավվածության ձևն ու հետագիծը որոշելիս՝ IDeA-ն հավատարիմ է վեց ուղենիշային սկզբունքների: Այս սկզբունքներն ապահովում են մեր վերջնական նպատակներին հասնելու հիմքը: Նրանք որոշակիացնում են մեր ուղղվածությունը՝ ցանկացած կոնկրետ նախաձեռնությանը կամ բնագավառին աջակցելու համար:

Այդ սկզբունքներն են՝

1 Սահմանել ձեռքբերումների և ներուժի առավել բարձր չափանիշներ՝ գործուն և չափելի միջոցներով

2 Ստեղծել փոխներգործության բաց հարթակ՝ տեղացի գործընկերների, միջազգային շահառուների և կառավարության հետ

3 Ամրապնդել այլ նախագծեր և միաժամանակ ներգործել մի քանի ոլորտների վրա

4 Մեծացնել մասշտաբներն ու ժամանակի ընթացքում ստեղծել ազդեցության շղթայական ռեակցիա

5 Կիրառել շահույթի և բարեգործական ներդրման համակցում՝ երկարաժամկետ ինքնակայունություն ապահովելու համար։

6 Կիրառել նախագծման ու կառավարման միջազգային լավագույն փորձը։

Մեր այս վեց ուղենշային սկզբունքները խոր ազդեցություն են թողել մեր գործընկերների հետ փոխգործողության աշխատանքում, ինչով մենք հպարտանում ենք և որին մենք նվիրված ենք։

Նախաձեռնությունները, որոնց աջակցում է IDeA-ն

Ստորև ներկայացվածը որոշակի պատկերացում է տալիս IDeA-ի աջակցած 2021 թվականի որոշ նախաձեռնությունների մասին:

2021

ՎԵՐԱՊՐԵԼՈՒՅ ԴԵՊԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

2020 թվականը բոլորի համար ծանր տարի էր, առավելապես ծանր էր Հայաստանի համար: COVID-19 համավարակի սահմանափակումների երկար ու ձիգ յոթ ամիսներից հետո 2020 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը լայնածավալ պատերազմ է բռնկվում: Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող վեցշաբաթյա պատերազմին վերջ է դնում փխրուն հրադադարը: Ռազմական հակամարտության առաջին իսկ օրերից Արցախից Հայաստան է տեղափոխվում մոտ 90 000 մարդ՝ փախստականին հավասարեցված կարգավիճակով: Հայաստանյան ձմռանն ընդառաջ Արցախի բնակչության ավելի քան մեկ երրորդը տեղահանված էր հարազատ բնօրրանից: Թեպետ 2021 թվականի հունիսի վերջերին մոտ 53 000 արցախցի արդեն վերադարձել էր Արցախ, սակայն նրանցից շատերը՝ վերադառնալուն պես, բացահայտել էին, որ իրենց տները վերածվել են ավերակների, ենթակառուցվածքներն ավերված են, իսկ գյուղատնտեսական հողերը դարձել են մշակման համար անմատչելի՝ օտարված կամ ականապատված լինելու պատճառով:

Հումանիտար ճգնաժամը, զանգվածային տեղահանությունը և փխրուն խաղաղությունը 2021 թվականին IDeA-ի բազմաթիվ գործընկերների համար դարձան առանցքային մտահոգությունների առիթ: Բոլորն ընդունեցին հետպատերազմյան այնպիսի խնդիրների լուծման անհրաժեշտությունը, ինչպիսիք են՝ անվտանգությունը, կայունությունը, կենսական կարիքների ու տեղահանության հետ կապված հարցերը, եթե գիտակցում էինք, որ Լեռնային Ղարաբաղը չպետք է մնա լարվածության գոտի՝ ի վնաս Հայաստանի, Ադրբեջանի և, ընդհանուր առմամբ, ամբողջ Հարավային Կովկասի:

Եւ այսպիսով, IDeA-ի 2021 թվականի աջակցության մեծ մասն ուղղվում է մարդասիրական նպատակների իրագործմանը:

AURORA
HUMANITARIAN INITIATIVE

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը հիմնադրվել է 2015 թվականին՝ Հայոց ցեղասպանությունը վերապրողների անունից և ի երախտագիտություն նրանց փրկողների: Նախաձեռնության հիմնադիրներ Վարդան Գրեգորյանի, Նուբար Աֆեյանի և Ռուբեն Վարդանյանի տեսլականը կյանքի է կոչվում հազարավոր աջակիցների ու գործընկերների շնորհիվ, այդ թվում՝ IDeA-ի, որն աջակցում է «Ավրորայի» բոլոր հիմնական նախագծերին:

«Ավրորան» ձգտում է լուծել հումանիտար խնդիրներն աշխարհի տարբեր անկյուններում և հենց տեղում օգնել՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ամենակարիքավորներին: Այն ձգտում է Հայաստանի պատմական փորձը վերածել երախտագիտության համաշխարհային շարժման: Ամբողջ աշխարհում բազմաթիվ մարդիկ, որոնք ճգնաժամերի պահին օգնություն են ստացել, այս նախաձեռնության միջոցով կարող են իրենց երախտագիտությունը հայտնել՝ նույնպիսի օգնություն տրամադրելով այլ կարիքավոր մարդկանց:

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության առանցքային նախագիծը «Ավրորա» մարդասիրական մրցանակն է, որը շնորհվում է նրանց, ովքեր վտանգում են իրենց կյանքը, առողջությունն ու ազատությունը՝ հանուն մարդկային կյանքի փրկության, ուրիշների առողջության ու ազատության: Յուրաքանչյուր տարի նման մի նշանավոր մարդասեր ստանում է դրամական զգալի միջոցներ և բացառիկ հնարավորություն՝ շարունակելու նվիրատվության շղթան: Այդ գումարով նա աջակցում է այն կազմակերպություններին, որոնք ոգեշնչել են իրեն մարդասիրական գործունեությամբ զբաղվել:

ՎԱՐԴԱՆ ԳՐԵԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ
(08.04.1934 թ. – 15.04.2021 թ.)

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիր և «Ավրորա» մրցանակի Ընտրող հանձնաժողովի անդամ Վարդան Գրեգորյանն ամերիկահայ ականավոր մարդասեր էր, որը հայտնի էր իր ահռելի ներուժով և կարեկցանքի անհուն պաշարով: Գիտնական, մանկավարժ, պատմաբան և մենթոր Վարդանը ոգեշնչող հանձնառություն ուներ՝ պահպանելու համընդհանուր մարդկայնության ուժը: Նրա բացառիկ կյանքն ու աշխատանքն արմատապես փոխել են աշխարհում շատերի կյանքը: Հետևապես, 2021 թվականին նրա ցավալի մահը սգո առիթ դարձավ ամբողջ աշխարհում: «Ավրորան» հարգանքի տուրք մատուցեց այս ոգեշնչող ուսուցչին ու գործընկերոջը: «Ավրորան» 70 000 ԱՄՆ դոլար նվիրաբերեց Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանության 150 000 հատոր գիրք ունեցող գրադարանին՝ ի հիշատակ Վարդան Գրեգորյանի. մի մարդու, որը գրադարանները դիտարկում էր որպես մարդկության կուտակած գիտելիքի տաճարներ: Վարդան Գրեգորյանի ժառանգությունը շարունակելու է ապրել հավերժության մեջ:

Ֆարթուն Ադան և
Իլվադ Էլման

Երախտագիտությունն՝ ի գործ

2020 թվականին «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը հինգերորդ «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակն առցանց արարողության ժամանակ շնորհեց Ֆարթուն Ադանին և Իլվադ Էլմանին. մրցանակակիրները մայր և դուստր են, որոնք ղեկավարում են Սոմալիում «Էլման» խաղաղության և մարդու իրավունքների կենտրոնը: Սա նաև սկիզբ դրեց մարդասիրական գործունեության նոր շրջափուլի՝ երեք կազմակերպությունների աշխատանքի միջոցով, որոնք առաջադրվել էին Ֆարթունի և Իլվադի կողմից՝ որպես 1 միլիոն դոլար մրցանակի շահառուներ:

Սոմալիում Love Does կազմակերպությունը նախաձեռնեց ծրագրեր՝ Դուսամարիբեում կանանց առաջնորդության ակադեմիայի զարգացման, Դուսամարիբեում և Մոգադիշոյում երկու դպրոցների շինարարության, Մոգադիշոյում լքված նորածինների և անցանկալի հղիությամբ կանանց համալիր օգնության ցուցաբերման, ինչպես նաև Կիսամայում սեռական ու գենդերային բռնության զոհերի աջակցման ուղղությամբ: Ակնկալվում է, որ այս աշխատանքն օգուտ կբերի 500 նորածինների, երեխաների, կանանց, ինչպես նաև ազդեցություն կունենա Սոմալիի երեք խոշոր քաղաքների ավելի քան 3 000 ընտանիքների կյանքի որակի վրա: Միաժամանակ կազմակերպությունը Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում իրականացվող իր գործունեության շրջանակում ձեռնարկեց մանկապարտեզի և նախակրթարանի շինարարությունը Գոմերում (Հյուսիսային Կիվու)՝ օգտագործելով մրցանակի համար շնորհված գումարը: Ակնկալվում է, որ այս ենթակառուցվածքներից՝ համալրված տեղի ուսուցիչներով և վարչական աշխատողներով, կօգտվի հարևանությամբ ապրող ավելի քան 1 600 մարդ: Love Does կազմակերպությունը որոշել է «Ավրորա» անունն օգտագործել Կանանց առաջնորդության ակադեմիայի, Սոմալիում միջնակարգ դպրոցի, ինչպես նաև Կոնգոյում իր կառուցած դպրոցների անվանման մեջ:

Կոնգոյի «Փանզի» հիմնադրամն (Panzi Foundation) իր նախագծային աշխատանքների ավելի քան մեկ հինգերորդը տրամադրել է հանքարդյունաբերությանը սոցիալ-տնտեսական այլընտրանքներ ապահովելուն՝ հանքարդյունաբերությամբ զբաղվող համայնքներում բնակվող երեխաների և սեռական բռնության ենթարկվածների համար: Այս աշխատանքը ներառում է դպրոցների հիմնանորոգում, փոքր դրամաշնորհների տրամադրում, խնայողության և փոխատվության ընկերակցությունների կազմակերպում, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստում և մարդու իրավունքների մասին իրազեկում՝ ի շահ Հարավային Կիվու նահանգի մոտ 4 000 բնակչի:

Մարդիկ դառնում են մարդ՝ մարդկանց միջոցով:

Հնդկաստանում «Պրաջվալան» (Prajwala) «Ավրորա» մրցանակի իր մասնաբաժինը նվիրաբերել է սոցիալական վերաինտեգրման համար բնականոն միջավայր ստեղծելուն և Հայդարաբադում սեռական շահագործման ենթարկված ու սեռական բնույթի հանցագործության զոհ դարձած մանկահասակների (215 հոգի) համալիր բուժում և հոգեբանական օգնություն տրամադրելուն:

Մեկնարկում է նվիրատվության մեկ այլ շրջափուլ

Ապրիլին Երևանում՝ Մատենադարանում, տեղի ունեցած միջոցառման ժամանակ «Ավրորան» հայտարարեց 2021 թվականի «Ավրորայի» հինգ հերոսների անունները: «Ավրորա» մրցանակի Ընտրող հանձնաժողովն ընտրում է մերօրյա հերոսների՝ դիտարկելով ամբողջ աշխարհից ստացված հայտերը, և նրանց բացառիկ խիզախությունը, նվիրվածությունը և թողած ազդեցությունը: Այդպիսի հավակնորդներից մեկը հետագայում դառնում է «Ավրորա» մրցանակի դափնեկիր:

2021 ԹՎԱԿԱՆԻ «ԱՎՐՈՐԱՅԻ» ՀԵՐՈՍՆԵՐՆ ԵՆ.

Գրեգուար Ահոնգբոնո
Կոտ դ'Իվուար
Հոգեկան առողջության խնդիրներով մարդկան իրավունքների համար պայքարող ակտիվիստ

Ռուբի Ալբա Կաստանյո
Կոլումբիա
Հողային իրավունքների պաշտպան և մարդու իրավունքների պաշտպան

Փոլ Ֆարմեր
1959-2022, ԱՄՆ
Բժիշկ և առողջապահական ակտիվիստ

Ջուլիեն Լուսենգե
Կոնգո
Լրագրող և մարդու իրավունքների պաշտպան

Աշվաք Մոհարամ
Եմեն
բժիշկ

«Հերոս լինելը նշանակում է համառ լինել՝ ավելի խաղաղ աշխարհ ստեղծելու գործում, որքան էլ դա դժվար կամ վտանգավոր լինի: Եթե մենք ցանկանում ենք ավելի լավ ապագա ունենալ, ապա պետք է համառ լինենք մեր բարության, համառ՝ մեր կարեկցանքի, համառ՝ մեր երախտագիտությունն արտահայտելու դրսևորումներում՝ նրանց նկատմամբ, ովքեր ձեռք են մեկնել ուրիշներին»:

Բենջամին Ֆերենց՝ *«Ավրորա» մրցանակի Ընտրող հանձնաժողովի պատվավոր համանախագահ*

«Ավրորայի» հերոսներն ստանում են հնարավորություն «Ավրորայի» միջազգային հարթակներում բարձրացնել իրենց առաքելությունների և իրենց հետ համագործակցած կազմակերպությունների աշխատանքի մասին իրազեկվածությունը: Նրանց պատմությունները, որոնք ներկայացվել են «Ավրորայի» ամենամյա «Հանդիպում 2021 թվականի «Ավրորայի» հերոսների հետ» Aurora Dialogues քննարկումների շրջանակում, համեստ են: Նրանք հույս, քաջություն ու կարեկցանք են ներշնչում այնպես, որ այս տարեկան հաշվետվության ընթերցողները կարող են այդ ամենը հենց իրենց վրա զգալ:

Ջուլիեն Լուսենգե

2021 թվականի հոկտեմբերին վեցերորդ «Ավրորա» մարդասիրական համաշխարհային ամենամյա մրցանակը շնորհվեց Ջուլիեն Լուսենգեին՝ «Կանանց համերաշխություն հանուն ներառական խաղաղության և զարգացման» կազմակերպության (SOFEPADI) և Կոնգոյացի կանանց հիմնադրամի (FFC) համահիմնադրին: Ջուլիենը և նրա կազմակերպությունները համարձակություն են ունեցել արդարադատության առջև կանգնեցրելու ավելի քան 800 բռնարարի, բժշկական փաթեթային օգնություն, նաև իրավական, հոգեբանական ու սոցիալ-տնտեսական վերաինտեգրման աջակցություն են տրամադրել արևելյան Կոնգոյում սեռական բռնություն վերապրած ավելի քան 7 500 մարդու:

Ջուլիեն Լուսենգեն ստացել է 1 000 000 ԱՄՆ դոլար մրցանակային դրամաշնորհ՝ առաջադրելով երեք կազմակերպությունների, որոնք աջակցում են կանանց ինքնաբուխ նախաձեռնություններին, հնարավորություն տալով գենդերային հիմքով բռնություն վերապրած ու ներքին տեղահանված անձանց վերաինտեգրվել հասարակությանը:

Հաշվի առնելով 2020 թ. Լեռնային Ղարաբաղի պատերազմի հետևանքով ստեղծված հումանիտար ծանր իրավիճակը՝ Ջուլիենը 2021 թվականի «Ավրորա» մրցանակի ֆոնդի 25 տոկոսն առատաձեռնորեն նվիրաբերեց Արցախում հրատապ հումանիտար հարցերով զբաղվող կազմակերպություններին: Այս նվիրաբերությանը միացան նաև «Ավրորայի» համահիմնադիրները, որոնք էլ այդ գումարը կրկնապատկեցին՝ հասցնելով 500 հազար ԱՄՆ դոլարի:

2021 թվականի ապրիլից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում «Ավրորան» ստացավ ևս 633 առաջադրում՝ 2022 թվականի «Ավրորա» մարդասիրական համաշխարհային մրցանակի համար: Այն ընդգրկում է 62 երկիր, այդ թվում՝ Հայաստանը, Բրազիլիան, Չեխիան, Վրաստանը, Հնդկաստանը, Նիգերիան, Պակիստանը, Ռուանդան, ԱՄՆ-ը և Ուկրաինան:

«ԱՎՐՈՐԱ» ՄՐՑԱՆԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

2021 թվականի հոկտեմբերի 8-10-ը Վենետիկի Սուրբ Ղազար կղզում «Ավրորան» անցկացրեց իր ամենամյա «Ավրորա» մրցանակի շնորհման արարողությունը՝ «Վեր հառնելով միասին» խորագրով: Վենետիկը, որտեղ 1717 թվականից ի վեր գտնվում է Մխիթարյանների՝ հայ կաթոլիկ միաբանների, հիմնած վանական համալիրը, պատմական մեծ նշանակություն ունի հայերի համար և հայկական մշակույթի համաշխարհային ամենանշանավոր կենտրոններից մեկն է: Դարեր առաջ տարածաշրջանում հայկական համայնքների բարեհաջող զարգացման և ինտեգրման պատմությունն արտացոլում է ժամանակակից հայ ժողովրդին բնորոշ բարդ ու համապարփակ ինքնությունն ու նրա գլոբալ ազդեցությունը:

Այս տեղանքի ընտրությամբ նշանավորվում է Եվրոպայում առաջին անգամ «Ավրորա» մրցանակի շնորհման արարողության անցկացումը: Տեղի ընտրության համար խթան էր հանդիսացել այն հսկայական կապը, որ գոյություն ունի այս համամարդկային կարևորության մշակութային վայրի և «Ավրորայի» գաղափարախոսության միջև՝ երախտագիտության և մարդասիրությանը կարևորումը:

Ստեղծելով մարդասիրության համաշխարհային ցանց

«Ավրորա» մարդասիրական համաշխարհային նախաձեռնությունը հարթակ է ծառայում բազմաթիվ այլ նախաձեռնությունների համար, որոնցում IDeA-ն հպարտ է իր ներդրումն ունենալ: Այս միջոցառումները, ընդհանուր առմամբ, ուղղված են մարդասիրական մտքի և գործողությունների ամրապնդմանն ամբողջ աշխարհում: Դրանք ներառում են՝

Պարբերաբար անցկացվող Aurora Dialogues քննարկումներն աշխարհի մարդասերներին, գիտնականներին, բիզնեսի ու քաղաքացիական հասարակության առաջնորդներին հնարավորություն են տալիս լուծումներ գտնել հումանիտար ամենահրատապ մարտահրավերների համար: Ի հավելումն «Ավրորայի» ամենամյա «Հանդիպում «Ավրորայի» հերոսների հետ» քննարկմանը՝ 2021 թվականին «Ավրորան» քննարկումներ է անցկացրել գաղափարներ զարգացնելու նպատակով: Այդ քննարկումները տարվա երկու հիմնական մարդասիրական թեմաների շուրջ էին՝ առողջապահական անվտանգություն (COVID 19 համավարակի մարդասիրական ազդեցությունները) և ճգնաժամն Արցախում: Համախմբելով տեղական և միջազգային փորձագետների՝ այս քննարկումներն օգնել են դրական փոփոխություններ ապահովելու հնարավորություններ ստեղծել՝ գաղափարների և լուծումների մշակման միջոցով:

«Այստեղ գտնվելը՝ այս բացառիկ մարդասերների հետ, որոնց կամքը դրդում է իրենց փրկել ուրիշներին, մատնանշում է այն բոլոր միջոցները, որոնցով կարող ենք օգնել ուրիշներին ոչ միայն վերապրել, այլև վերածնվել, և, ի վերջո, բարօրության հասնել, ինչն էլ այս օրերին մեր քննարկման թեման է»:

***Նուբար Աֆեյան**՝«Ավրորա» նախաձեռնության համահիմնադիր*

«Ավրորա» համայնքը համախմբում է անձնուրաց անհատների, որոնք կենսական կարևորության աշխատանք են կատարում տեղական մակարդակում՝ նրանց համար ապահովելով այդքան անհրաժեշտ աջակցություն: 2020 թ. դեկտեմբերին սկիզբ առած այս նախագիծը դեռևս ձևավորման փուլում է: Սակայն 2021 թվականին սկսվել է աշխատանքը՝ համախոհների միջև կապեր ստեղծելու համար ուղիներ գտնելու և առաջարկելու այն աջակցությունը, որը նրանք փնտրում են:

«Ավրորայի» դրամաշնորհները ոգեկոչում են Հայոց ցեղասպանությունը վերապրողներին փրկողների հիշատակը՝ աջակցելով կրթական և մարդասիրական ծրագրերին ու պահպանելով հայկական ժառանգությունը:

Ի հավելումն բազմաթիվ անհատական դրամաշնորհների՝ անապահով համայնքների կամ ոլորտների համար, 2021 թվականին «Ավրորայի» դրամաշնորհներից 10 000 ԱՄՆ դոլար նվիրաբերվել է Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտին՝ Մատենադարանին: Դրամաշնորհը միտված է օգնելու թվային Մատենադարանի ստեղծմանը՝ մեծացնելով ձեռագրատան հասանելիությունը: Սա էլ իր հերթին նպատակ ունի դյուրացնել ձեռագրատան հիմնական ցուցասրահի առցանց ցուցադրումը:

2021 թ. «Երիտասարդական «Ավրորա»» ամենամյա մրցանակն էլ շնորհվել է Հարավային Աֆրիկա (Waterford Kamhlaba UWCSA) քոլեջի ուսանողներին, որոնք նախագիծ են իրականացնում Էսվատինիում: Մրցանակի ֆոնդն աճել էր. նրանք 4 000 ԱՄՆ դոլարի փոխարեն ստացան 5 000՝ իրականացնելու իրենց՝ «Հույսի սերմեր» նախագիծը, որը, ջանում է Մալինձա փախստականների ճամբարի երիտասարդների համար տարատեսակ հնարավորություններ ստեղծել: Այս նպատակով էլ ստեղծվել է երիտասարդական կենտրոնը, որը ծառայում է որպես առցանց կրթական կենտրոն և սոցիալական հարթակ:

«Այնքան մեծ ջանքեր ենք ներդրել այս նախագծի մեջ: Սա մեզ հույս է տալիս, որ մենք կարող ենք լինել բարեփոխումներ իրականացնող եւ մեր ձայնը կարող է լսելի լինել»:

Փրինս՝ *Waterford Kamhlaba UWCSA թիմի անդամ*

«Ավրորան՝ Արցախին»

2020 թվականի վերջին Արցախում և նրա շուրջբոլորը ծագած կատաղի հակամարտությունն աշխարհի հայերը, նրանց ընկերները և գործընկերներն խոր ցնցումով ու ցավով ընդունեցին: Շատ լավ սերտած լինելով ընդհանուր մարդկության դասերը՝ հենց մեր պատմության ու անձնական փորձառության միջոցով, շատ հայեր ձգտում էին աջակցել հրատապ մարդասիրական օգնության ջանքերին: IDeA-ն իր աջակցությունը ցուցաբերեց «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության և «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով:

«Ավրորայի» անմիջական օգնությունն Արցախին սկսվել է 2020 թվականի նոյեմբերից՝ հինգ ծրագրի մեկնարկով և հետագա առաջարկների կոչով: Այսպիսով սկսվում է «Ավրորան՝ Արցախին» նախագիծը՝ 2020 թվականի Արցախյան (Լեռնային Ղարաբաղ) պատերազմից տուժածների համար:

Արցախին հատկացվող մարդասիրական աջակցությունն ի սկզբանե իրականացվել է Ավրորայի #AraratChallenge շարժման միջոցով, որը համաշխարհային հանգանակության նախաձեռնություն է՝ ուղղված անապահով համայնքների հումանիտար կարիքներին: Մինչև փետրվար «Ավրորան» ավելի քան 470 000 ԱՄՆ դոլարի օգնություն էր տրամադրել Արցախին՝ 47 տարբեր նախագծերին օժանդակելու համար և ակտիվորեն աշխատում էր ծրագրի հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ:

Հետագայում պարզ դարձավ, որ ավելի շատ ռազմավարական լուծումներ են պահանջվում՝ նախաձեռնությունների կայունությունն ապահովելու և երկարաժամկետ ազդեցությունն ապահովելու համար: Սա կհանգեցներ ենթակառուցվածքների վերականգնմանը, փոքր ձեռնարկությունների աջակցմանն ու տնտեսության խթանմանը: Մինչև մարտ ամիս «Ավրորան» արդեն սկսել էր համապատասխան ուղղությամբ փոխել ընթացքը: Այն ընդլայնեց իր աջակցության շրջանակը՝ մարդասիրական հրատապ կարիքներից անցնելով երկարաժամկետ սոցիալական կայուն զարգացում ապահովելուն՝ մարդասիրական հրատապ օգնության 32 ծրագրեր (վերմակների, սննդի, շտապօգնության մեքենաների, ջեռուցիչների տրամադրում), ենթակառուցվածքների վերականգնման 11 նախաձեռնություններ (ջուր, էլեկտրականություն, հիվանդանոցի վերականգնում) և սոցիալական զարգացման 14 ծրագրեր, ներառյալ կրթությունն ու աշխատանքի ապահովումը: Մինչև 2021 թվականի ապրիլի վերջ IDeA-ն նրանց թվում էր, ովքեր կարողացել էին օգնել «Ավրորային»՝ այդ հատկացումները հասցնել 1.7 միլիոն դոլարի՝ 75 նախագծերին աջակցելու համար:

2021 թվականի հունիսին հայտարարվեց «Ավրորայի» աջակցության նոր փուլի մասին՝ 9 նախագծերի համար, որոնք ընդամենը մեկ ամիս առաջ Դիլիջանում կայացած «Գործընկերություն՝ հանուն Արցախի» Aurora Dialogues քննարկման ուղղակի արդյունքն էին: Այս ծրագրերը, որոնք ընդգրկում են այնպիսի նպատակներ, ինչպիսիք են՝ հնարավորությունների ընդլայնում, սոցիալական վերաինտեգրում, առողջապահություն ու կրթություն, ներառում էին հացաբուլկեղենի արտադրամասի հիմնում, մեղվաբուծություն, թատերական արվեստի և մարտարվեստի ուսուցում:

AURORA DIALOGUES. «ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ»

2021 թվականի մայիսին «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը Դիլիջանում համախմբել էր գործընկերներին, տեղի եւ սփյուռքի կազմակերպությունների, հիմնադրամների, Արցախի պետական մարմինների եւ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ «Գործընկերություն՝ հանուն Արցախի» Aurora Dialogues քննարկման շրջանակում: Այս հանդիպումը կարիքների, կարողությունների քարտեզագրում էր՝ հասկանալու աշխատանքի ծավալը, ուղղություններն ու հնարավորությունները հետագա աշխատանքը կազմակերպելու համար:

Այս քննարկումները շարունակվեցին սեպտեմբերին՝ Ստեփանակերտում՝ ներկայացնելու նախորդ հանդիպումների արդյունքները և քննարկելու նոր առաջարկներ: Մայիսյան քննարկումների շոշափելի արդյունքներն արդեն իսկ տեսանելի էին: Սկսել էին կարի արտադրությանն ու գորգագործությանն աջակցող ծրագրերը, ինչպես նաև 75 համայնքային սոցիալական աշխատողների վերապատրաստումը՝ համաձայն Արցախի կառավարության կողմից հաստատված կայունության հայեցակարգի: Aurora Dialogues քննարկումները հաստատեցին և ամրապնդեցին շահառուների փոխգործակցությունը՝ բարելավելով նախագծերի համակարգումը և գործարկելով համատեղ աշխատանքային ծրագրեր:

2 600 000

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության շահառուների թիվն ամբողջ աշխարհում մինչև 2021 թ. տարեվերջ

IDeA-ն շարունակեց սատարել «Ավրորային», որն Արցախի ժողովրդին աջակցելու հանձնառության ամրապնդման համար օգոստոսին Ստեփանակերտում գրասենյակ ունեցավ: Այս գրասենյակը նպատակ ուներ և՛ ուժեղացնելու «Ավրորայի» մարդասիրական համակարգման ջանքերը, և՛ տեղի գործընկերների համար կենսափորձով փոխանակվելու հարթակ ծառայելուն: Արցախում մարդասիրական ջանքերի համալիր ու գործակցային բնույթը նշանակում էր, որ մինչև տարեվերջ «Ավրորան» 55 տեղական և միջազգային գործընկերների հետ արդեն իրականացրել էր 80 ծրագիր՝ օգնելով արցախցի մոտ 130 000 մարդու:

2022 թվականին ընդառաջ «Ավրորան» ևս 25 000 ԱՄՆ դոլար հատկացրեց՝ տեղահանված անձանց սննդի անվտանգությունն ապահովելու նպատակով: Այս գումարը հավաքվել էր Երևանում կազմակերպված Սուրբ Ծննդյան բարեգործական տոնավաճառի հասույթի հաշվին: Այն համատեղ նախաձեռնություն էր ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի և «Թովմասյան» բարեգործական կազմակերպության հետ:

> ***«Այս ամենն իրականացնելու համար մենք պետք է համատեղեինք ծրագրերն ու միջոցներ հայթայթեինք: «Ավրորան» մեզ հարթակ, հնարավորություն ընձեռեց համախմբվելու, քննարկելու և համատեղ որոշումներ կայացնելու այն ուղղությունների վերաբերյալ, որոնք մենք պետք է առաջնահերթություն դարձնենք»:***
>
> ***Արա Բաբլոյան***՝ *«Արաբկիր» բժշկական համալիր - Երեխաների եւ դեռահասների առողջության ինստիտուտի գիտական ղեկավար*

Ծանոթացի՛ր «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությանը, այցելի՛ր **www.auroraprize.com**

2021

ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ ԶԳՏԵԼ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ

Քանի որ լճացման մեջ հայտնված տնտեսությունները 2021 թվականին իրենց ռեսուրսներն ուղղում էին հրատապ կարիքները հոգալուն, համավարակի ազդեցությունն առավել տեսանելի դարձավ կայուն զարգացման ֆինանսավորման հարցում: Թեև IDeA-ն նույնպես կարծում էր, որ իր առաջնահերթությունները սեղմվել են, այնուամենայնիվ, ձգտում էր շարունակել աջակցությունն առավել հեռահար նախաձեռնություններին, որոնք ունակ էին հնարավորինս մասշտաբային ազդեցություն թողնելու:

Նորարարությունից մինչև առողջապահություն ու կրթություն՝ IDeA-ն ձգտում էր ավելի բա-րեկեցիկ Հայաստանի տեսլականն ամուր պահել իր տեսադաշտում:

Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ FAST

FAST DISCOVERING THE FUTURE

Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը (FAST) գրավիչ ու հավակնոտ ինովացիոն հարթակ է, որը նախատեսված է Հայաստանի գիտական և տեխնոլոգիական վերածնունդն առաջնորդելու համար: Ի սկզբանե մտածված լինելով «Հայաստան 2020»-ի շրջանակում, FAST-ը գործում է 2017 թվականից: Այն նպատակ ունի առաջ մղելու հայկական գիտությունը, տեխնոլոգիաներն ու նորարարությունը և երկիրը դարձնելու համաշխարհային տասը նորարար, ինչպես նաև մինչև 2041 թվականը՝ Տվյալների գիտության և արհեստական բանականության հինգ լավագույն նորարարական երկրներից մեկը:

FAST-ի աշխատանքում առանցքային նշանակություն ունի հավատը համատեղ ջանքերի նկատմամբ և ամուր համոզմունքը՝ գիտական և ձեռնարկատիրական ոլորտներում հայերի հսկայական տաղանդի ու կարողությունների վերաբերյալ՝ կլինի երկրում, թե երկրի սահմաններից դուրս: Այս, ինչպես նաև երկրի այլ կարողությունների խթանումն ու ուղղորդումը FAST-ի առաքելությունն է:

Հավակնոտ լինելով հանդերձ՝ FAST-ը խիստ ռազմավարական է ու հիմնված տվյալների վրա: Այն համակարգված մոտեցում է ցուցաբերում իր ծրագրավորմանը՝ դիտարկելով գիտությունը, տեխնոլոգիաները և նորարարությունը (STI) որպես էկոհամակարգ, որը հիմնված է կրթության, հետազոտության ու առևտրայնացման հիմնասյուների վրա: Հենց այս երեք հիմնասյուների օգնությամբ էլ հարթակը կողմնորոշվում է իր նախագծերի մշակման ժամանակ՝ գիտության ու ձեռնարկատիրության ոլորտներում կրթական հնարավորություններ ստեղծելու, գիտական և ֆինանսական ցանցերը միմյանց կապելու և նորարարական հետազոտություններին աջակցելու: Այս կերպ սկսում է ձևավորվել ինտեգրված էկոհամակարգ՝ Հայաստանի գիտության, տեխնոլոգիաների և նորարարության առաջխաղացման համար:

FAST-ի մոտեցումը՝ խթանելու միջինստիտուցիոնալ և միջոլորտային սիներգիաների զարգացումը, որն ի զորու է բազմապատկելու ազդեցությունը, լիովին համահունչ է IDeA-ի սեփական ուղենիշային սկզբունքներին: Հենց սրանով պայմանավորված էլ IDeA-ն FAST-ի կայուն աջակիցն է մի շարք նախաձեռնություններում:

«Կրթությունն ու գիտելիքի ձեռքբերումը դարեր շարունակ եղել են հայկական ինքնության և մշակույթի հիմնարար տարրերը: Քանի որ այսօրվա Հայաստանի Հանրապետությունը սկիզբ է առնում իր անցյալից, ուստի կա գիտելիք ձեռք բերելու աճող, պատմական ծարավ, մասնավորապես՝ գիտության և տեխնիկայի ոլորտներում, և այդ գիտելիքը գործնականում կիրառելու՝ արդյունավետ և մրցունակ ազգ դառնալու համար: Հայաստանում և Հայաստանի զարգացման ծրագրերի վրա 20 տարի աշխատելուց հետո մենք հիմնեցինք FAST-ը՝ երկրի ինովացիոն էկոհամակարգն ամրապնդելու և այն համաշխարհային ցանցերին միացնելու, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում աշխատող ստիպենդիաների միջոցով: Կարճ ժամանակում կրթաթոշակային դրամաշնորհների, վերապատրաստման ծրագրերի, ստարտափների ինկուբացիայի և աքսելերացիոն նախաձեռնությունների և մի շարք այլ ջանքերի շնորհիվ FAST-ը իրեն դրսևորեց որպես առաջընթացի կարևոր ու հզոր խթան»:

Նուբար Աֆեյան - *FAST-ի համահիմնադիր, Flagship Pioneering ընկերության հիմնադիր և գործադիր տնօրեն, Moderna Therapeutics ընկերության համահիմնադիր և տնօրենների խորհրդի նախագահ:*

Հաշվի առնելով անցյալը, ներկան ու ապագան

FAST-ն ևս անմասն չմնաց 2020 թվականին համավարակի հետևանքով առաջացած խնդիրներից: Հանգանակությունն ու ծրագրի իրականացումն առավել դժվար էր՝ հաշվի առնելով ֆինանսների ու տեղաշարժի սահմանափակումները: 2021 թվականը շարունակեց այս դժվարությունների հետ պայքարը, սակայն այդ տարվան առավել շատ բնորոշ էր վերածնունդը, ինչպես նաև՝ վերարժևորումը:

2021 թվականին FAST-ի մեր գործընկերներն ամփոփեցին իրենց եռամյա կատարողականը: Մանրակրկիտ պլանավորումից ու նախապատրաստումից հետո 2018 թվականին մեկնարկել էին նախաձեռնություններ, որոնք ուղղված էին Հայաստանում նորարարության սերմերը ցանելուն՝ ինչպես խթանման, այնպես էլ հաղորդակցության միջոցով: Մինչև 2021 թվականն այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են FAST-ի ADVANCE դրամաշնորհներն (ADVANCE grants) ու Գիտության և տեխնոլոգիաների հրեշտակների ցանցը (STAN) զարգացման առաջին քայլերն են անում: Սկսել էին զարգանալ սփին-օֆֆ նախագծերն ու նախաձեռնությունները: Դիտարկումներն ու դասերը ներառվում էին նոր և վերամշակված նախագծերում:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ

FAST-ը 2021 թվական մուտք գործեց հստակ համոզմունքով. արհեստական բանականության առաջ մղումը խորապես կազդի Հայաստանի տնտեսության վրա: Հետևաբար, այն պետք է լինի միջամտության առանցքային ուղղություն: FAST-ը որոշել է մեծացնել Հայաստանի մարդկային կապիտալը արհեստական բանականության և տվյալների գիտության ոլորտում՝ սկսելով երիտասարդներից:

2021 թվականից FAST-ն աջակցում է կրթությունը վերաձևավորելու Հայաստանի մոտեցմանը՝ այն համապատասխանեցնելով հասարակության ապագա կարիքներին՝ արհեստական բանականության հետազոտողների և ավագ դպրոցի նորարարների համար «խողովակներ» կառուցելու միջոցով: Մեկնարկում են արհեստական բանականության սերնդի կոնցեպցիայի մշակման ամենավաղ փուլերը: Արհեստական բանականության «խողովակաշարի» ստեղծումը ճանաչվում է որպես ամբողջական փաթեթ, որը ենթադրում է պետական և մասնավոր դերակատարների ներգրավվածություն, ինչպես նաև օտարերկրյա և սփյուռքի փորձաքննություն: Այսպիսով, նախագիծն իրագործելի է դառնում այլ կրթական հաստատությունների հետ գործակցության շրջանակում, ներառյալ ավագ դպրոցները և համալսարանները:

Ծրագրի սերմերը ցանելով 2021 թվականին, այնուհետև դրա հայեցակարգն առաջ մղելով դեպի 2022 թվականը՝ FAST-ը ակնկալում է 2023 թվականին ծրագիրը փորձնականորեն կիրառել Հայաստանի 10 ավագ դպրոցներում: Ուսուցումը կիրականացվի երկու ուղղությամբ՝ բազային և առաջադեմ: Երկու ծրագիրն էլ կխորացնեն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի գիտելիքները: Այնուհանդերձ, մինչ բազային ծրագիրն ուսանողներին կծանոթացնի Արհեստական բանականության հիմնական հայեցակարգերին, առաջադեմ սխեման կխորանա Արհեստական բանականության և դրա հավելվածի մեջ, ինչպես նաև կուսուցանվի մեքենայական ուսուցման հիմունքներն ու խոր գիտելիքներ: Այն նաև կառաջարկի գործնական և փափուկ հմտությունների զարգացման հնարավորություններ:

ADVANCE հետազոտական դրամաշնորհներ

IDeA-ն շարունակեց FAST-ին աջակցել է նաև 2021 թվականին: Սա ներառում էր աջակցություն հիմնադրամի ADVANCE հետազոտական դրամաշնորհներին՝ նախատեսված հայ գիտական համայնքի համար: 2020 թվականին մշակված սխեման նպատակ ունի Հայաստան բերելու գիտական բարձրագույն փորձը՝ միմյանց կապելով միջազգային հեղինակավոր գիտնականներին (PIs), տեղական հետազոտողներին և ուսանողներին: Միջազգային հեղինակավոր գիտնականների անմիջական վերահսկողության ներքո ձևավորվում են 2-7 հետազոտողներից բաղկացած նոր հետազոտական թիմեր: Գիտնականներն էլ սահմանում են հետազոտական նախագիծն ու ղեկավարում այդ թիմերի աշխատանքը: Թիմերը ստանում են երկարաժամկետ համապարփակ ինստիտուցիոնալ և ֆինանսական աջակցություն՝ դրամաշնորհների ու վերապատրաստման տեսքով:

ADVANCE grants -ն իր գործունեությունը սկսել է կենսատեխնոլոգիայի և մեքենայական ուսուցման ոլորտներում երկու նախագծերով, որոնք ձևավորվել են նշանավոր գիտնականներ՝ պրոֆեսորներ Կարապետ Անդրանիկյանի (Համբուրգի տեխնոլոգիական համալսարան, Գերմանիա) և Առնակ Դալալյանի (Փարիզի վիճակագրության և տնտեսագիտության կառավարման ազգային դպրոց) ղեկավարության ներքո: 2021 թ. սկսվել են ծրագրի ընդլայնման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքները, որոնք, դրամահավաքին զուգահեռ, շարունակվելու են նաև 2022 թվականին:

Կենսատեխնոլոգիայի ոլորտում Հայաստանի դինամիկ ապագայի առաջխաղացումը

Շրջանաձև տնտեսությունը կարևոր տեղ է գրավում վնասակար թափոնների ազդեցությունների կառավարման և ռեսուրսների պահպանմանն ուղղված ջանքերում: Հայաստանում արդյունաբերական թափոնների կառավարումը շարունակում է թերզարգացած մնալ: Այստեղ միայն պանիր, գինի ու գարեջուր արտադրողները տարեկան արտադրում են ավելի քան 10 միլիոն տոննա օրգանական թափոն: Չնայած այս թափոնները կազմված են բազմաթիվ բարձրարժեք օրգանական միացություններից, որոնք կարող են կիրառվել նյութերի, փաթեթների, սննդի, կերերի ու էներգիայի արտադրության մեջ, սակայն առ այսօր դրանք ավելի հաճախ պարզապես արտանետվում են շրջակա միջավայր՝ երբեմն որպես պարարտանյութ:



2020 թվականի սեպտեմբերին, հիմնադրամի ADVANCE դրամաշնորհների շրջանակում, ձևավորվում է կենսատեխնոլոգիայի նախագծի թիմը՝ գիտնական, պրոֆեսոր Կարապետ Անդրանիկյանի ղեկավարությամբ: Թիմը բաղկացած է յոթ ավագ և կրտսեր գիտաշխատողներից՝ Երևանի պետական համալսարանի և ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտա-արտադրական կենտրոնի տարբեր բաժիններից:Նրանց աշխատանքն ընդգրկում է ֆերմենտային տեխնոլոգիայի, մանրէաբանության և ինժեներության գործընթացների հայեցակետերը՝ շիճուկ, գինի ու գարեջուր արտադրող ընկերությունների համար կայուն և էկոլոգիապես մաքուր գործընթացներ զարգացնելու համար: Ծրագիրը տրամադրելու է տարբեր միկրոօրգանիզմներ ու ֆերմենտներ, որոնք կներառվեն գյուղատնտեսական տվյալ կուլտուրաների հավա-քածուներում և որպես գործիք կկիրառվեն համապատասխան ոլորտներում: Այս կերպ, այն կուղղվի վերլուծության, գենետիկայի և կենսաքիմիայի բնագավառներում գիտական մեթոդների զարգացմանը:

Հայ հետազոտողներին, արդյունաբերողներին ու գիտնականներին միջազգային լաբորատորիաների և գիտաժողովների հետ կապելով՝ այս նախագիծն օգնում է ստեղծել կենսատնտեսագիտության միջազգային ցանց, որտեղ Հայաստանը կարող է ամրագրել իր դերն ու նշանակությունը:

B-On ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆԱԽԱՏԻՊԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

2021 թվականի սկզբին Հայաստանի կենսագիտությունների ոլորտն ուներ ներուժ՝ թույլ տալու հանրահռչակ ստարտափներ ստեղծելու: Հայաստանում գոյություն ունեցող մարդկային կապիտալի և մատչելի ստարտափների վենչուրային ֆինանսավորման առկայության պայմաններում նորարարության հիմնական խոչընդոտը մնում էր հասանելի և կենտրոնացված փորձարարական լաբորատորիաների առկայությունը: 2021 թվականին FAST-ը սկսում է աշխատել B-On Biotech նախատիպային լաբորատորիայի հայեցակարգի մշակման ուղղությամբ. սա խնդրի լուծմանն ուղղված առաջին քայլն էր:

B-On լաբորատորիան կենսատեխնոլոգիաների ոլորտի նորարարներին կառաջարկի հնարավորություն՝ վերածելու իրենց գաղափարները արդյունքի, և լաբորատոր մանրակրկիտ հետազոտությունների համար տրամադրում համատեղ աշխատանքային տարածք: Լաբորատորիան նպատակ ունի ստեղծելու ստարտափների, ուսանողների, հետազոտողների, ոլորտի միջազգային փորձագետների և ներդրողների համայնք, որոնք կարող են օգնել B-On-ի ստարտափներին՝ ռազմավարական խորհրդատվության, ցանցային և վաղ փուլի ֆինանսավորման հասանելիության հարցերում:

2021 թվականին FAST-ը սկսեց ծրագրի գնումների փուլը և գործընկերների, դոնորների և պետական աջակցության ներգրավումը: Հայաստանի ազգային ագրարային համալսարանում տեղակայված լաբորատորիան ապահովվեց ու հիմնանորոգվեց համալսարանի և ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ: Դոնորների աջակցությամբ ձեռք բերվեցին և տեղադրվեցին ավելի քան քառասուն տեսակի կենսատեխնոլոգիական մասնագիտացված սարքավորումներ:

2021 թվականին նախագծի վրա աշխատող թիմը զեկուցում է առաջընթացի առաջին քայլերի մասին: Հետազոտական այս առաջին փուլը հիմնականում կենտրոնացած էր շիճուկի ու գինեգործության արտադրական թափոնների և այսօրինակ թափոնները միկրոօրգանիզմների ու ֆերմենտների համար հասանելի սուբստրատի վերածելուն ուղղված մեթոդների մշակման վրա:

Թիմը նաև անցկացրել է մի շարք սեմինարներ, որոնք նախատեսված էին ուսանողներին ու հետազոտողներին մանրէաբանության, կենսաբազմազանության և ֆերմենտաբանության ժամանակակից տեխնիկայի գիտելիքներով զինելու, ինչպես նաև նրանց լաբորատոր փորձերին ու խմբային աշխատանքին ծանոթացնելու համար: Մինչև օրս այս սեմինարների շահառու է դարձել ավելի քան 60 հոգի, ներառյալ ուսանողներ, հետազոտողներ և ոլորտի ներկայացուցիչներ:

«Պահելով կատարյալ հավասարակշռություն տեսականի ու գործնականի միջև՝ այս աշխատաժողովը գիտելիքներ տվեց ոչ միայն գիտության, այլև գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունաբերության վերաբերյալ: Դասախոսների մասնագիտական հմտություններն ամենաբարձր մակարդակի վրա են...»:

Մարինա Տիմոտինա, *Ռուս-Հայկական համալսարանի ասպիրանտ:*

Փոխակերպելով հայկական առողջապահությունը

IDeA-ն աջակցում է «Հայաստան 2041» զարգացման օրակարգին՝ հզորացնելու Հայաստանն ու աշխարհասփյուռ հայությանը: Այդ օրակարգը, որն այժմ հավաքականորեն առաջ է մղվում «Ապագա հայկականը» նախաձեռնության միջոցով, մշակվել է McKinsey & Co-ի վերլուծության հիման վրա՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս առկա մակրոտնտեսական պայմանների վերաբերյալ: Վերլուծությունը սահմանել է առողջապահությունը որպես հինգ առաջնահերթ ոլորտներից մեկը, որի զարգացման համար միջամտության անհրաժեշտություն կա:

Առողջապահական ցանց Հայաստանի համար (ՀԵՆԱՐ) հիմնադրամ

ՀԵՆԱՐ հիմնադրամը ստեղծվել է 2021 թվականի վերջին: Այն հարթակ է, որը նպաստելու է Հայաստանում առողջապահության կայուն զարգացմանը՝ առողջապահական էկոհամակարգի վերափոխման միջոցով: ՀԵՆԱՐ-ը ձգտում է միավորել ոլորտի ներկայացուցիչներին՝ խթանելով վերափոխիչ նախաձեռնությունները և աջակցելով պետություն-մասնավոր հատված գործակցության միջոցով իրականացվող ծրագրերին:

Լուծման մեջ կյանք ներդնելով

COVID-19 համավարակը ցայտուն կերպով ցույց տվեց մեր կախվածությունը առողջապահության հասանելիությունից, դրա արդյունավետ կառավարումից և պատվաստանյութերն արագորեն մշակելու և բաշխելու մեր կարողությունից: Առողջապահության ոլորտում ներդրումների կարևորությունը հաստատված է վճռականորեն. այս գաղափարն առավել ամրապնդվեց Արցախյան պատերազմի հետևանքով Հայաստանի առողջապահական ծառայությունների վրա ընկած լրացուցիչ ծանրաբեռնվածության պատճառով:

Գիտակցելով բարեփոխումների նշանակությունն ու հրատապությունը՝ 2021 թվականի ամռանը IDeA-ն աշխատեց գործընկերների և տեղական շահագրգիռ կողմերի հետ՝ հայեցակարգելու ու ստեղծելու մի կազմակերպություն, որն ի վիճակի կլինի նպաստելու առողջապահության արդյունավետ ու ճկուն վերափոխմանը: ՀԵՆԱՐ հիմնադրամը սկսել է իր գործունեությունը 2021 թվականի վերջին՝ ռազմավարական պլանավորման, առաքելության ու տեսլականի ձևավորման վրա երկար ամիսներ աշխատելուց ու կապեր հաստատելուց հետո, ինչին IDeA-ն՝ այլոց հետ, ներդրել է իր ժամանակն ու ռեսուրսները:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՂԱԿԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆԸ

Առողջության առաջնային պահպանման օղակը Հայաստանի առողջապահական համակարգի հիմքն է: Այսուհանդերձ, ՀԵՆԱՐ-ի նախնական հետազոտությունները ցույց տվեցին, որ այս առաջնային ոլորտը հրատապ բարեփոխումների կարիք ունի: Հայաստանում վաղաժամ մահվան դեպքերի մոտ 22 տոկոսը ոչ վարակիչ հիվանդություններից են, իսկ հանրային առողջապահական ծախսերի 89 տոկոսը բուժառուն վճարում է իր իսկ գրպանից Ընտանիքների 16 տոկոսը եկամտի 10 տոկոսը ծախսում է առողջության վրա: Առողջության առաջնային պահպանման օղակի ծառայությունները զգալիորեն թերի են օգտագործվում, քանի որ բուժառուները դրանք շրջանցում են, իսկ որտեղ օգտագործվում են՝ չափից շատ են ուղղորդումները դեպի մասնագիտացված բուժում:

Ընտրելով այս ոլորտը որպես միջամտության կարիք ունեցող՝ ՀԵՆԱՐ-ն այդ պահից ի վեր առողջության առաջնային պահպանման օղակի հզորացմանը միտված աշխատանքային խմբին առաջարկել է ծրագրի կառավարման աջակցություն: ՀՀ առողջապահության նախարարության ղեկավարությամբ գործող այս աշխատանքային խումբը ԱՀԿ գնահատման շրջանակից կիրառել է 14 ռազմավարական և գործառնական լծակներ առողջապահության ազգային համակարգերի համար՝ բացահայտելու Հայաստանի առաջնային բուժօգնության ապահովման ոլորտի 127 հիմնական բացերը: Մեկ ռազմավարական նստաշրջանի և երեք սեմինարների ընթացքում, որոնցում ներգրավված են եղել ոլորտի ավելի քան 20 մասնագետ, 2022 թվականին աշխատանքային խումբը (կազմված 10 փորձագետից) այս բացթողումների վերացման համար մշակել է 192 առաջարկություն: Այդ առաջարկություններից 69-ը կառավարությունն առաջնահերթություն է ճանաչել ու ներառել 2022-2026 թվականների միջնաժամկետ գործողությունների ծրագրում:

ՀԵՆԱՐ-ի հայեցակարգը մշակելիս որոշվել էր, որ միջնաժամկետ հեռանկարում հիմնադրամի հիմնական խնդիրը լինելու է ոչ թե դրա շահառուների, այլ հենց համակարգի հետ աշխատելը: Սա ենթադրում էր ոլորտի քաղաքականությունը մշակողների հետ փոխ-գործողություն և գործընկերային ցանցի զարգացում, որն ունակ էր համատեղելու գիտելիքն ու հմտությունները ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս:

ՀԵՆԱՐ-ի առաջնահերթ ուղղություններն ընդգրկում էին առաջնային օղակի առողջապահությունը և առողջապահական անվտանգությունը, ինչպես նաև տաղանդների զարգացումը ու թվային փոխակերպումը: Կարճաժամկետ ուշադրություն էին պահանջվելու կարիքների ու բացերի գնահատման և այդ ոլորտներում նախագծային գործիքների մշակման համար:

Այս նախնական աշխատանքի ազդեցությունը ՀԵՆԱՐ-ի կողմնորոշման վրա ակնհայտ դարձավ 2022 թվականին: Հիմնադրամը պաշտոնական ու արդյունավետ աշխատանքային հարաբերություններ հաստատեց ՀՀ առողջապահության նախարարության և Առողջապահության ազգային ինստիտուտի հետ՝ դառնալով առաջնային առողջապահության վերափոխման վստահելի գործընկեր:

ՀԵՆԱՐ-ի մոտեցումն աջակցում ու լրացնում է IDeA-ի սեփական ուղենիշային սկզբունքները տարբեր առումներով: Մասնավորապես՝ սփյուռքի փորձագետների միջոցով համեմատական համակարգերի լավա-գույն փորձի ուսումնասիրությունը, դեպքերի ուսումնասիրությունների համեմատությունը և ԱՀԿ-ի հետ գործակցությունը ցույց են տալիս չափանիշները բարձրացնելու, լավագույն փորձը կյանքի կոչելու և տեղական, միջազգային ու պետական շահագրգիռ կողմերի համար բաց հարթակ ստեղծելու ձգտումը:



Հետաքրքված ես ՀԵՆԱՐ հիմնադրամով, այցելի՛ր
www.henar.am

Կրթության զարգացումը Հայաստանում



Հայերն են ստեղծում Հայաստանը: Կրթության ոլորտում ներդրումներն ուղիղ ներդրում են երկրի ապագայի մեջ: Հայաստանում կրթության հասանելիությունն ու որակը բարձրացնող նախաձեռնությունները 2021 թվականին ընդգրկում են IDeA-ի կողմից աջակցվող գրեթե բոլոր ծրագրերը:

IDeA-ն կրթական գերազանցության վճռական ջատագովն է: Հետևապես, այն Դիլիջանի միջազգային քոլեջի և նրա աշխատանքի հպարտ նվիրյալն է: 2021 թվականին IDeA-ն ընդլայնեց իր աջակցությունը կրթական գերազանցությանը՝ սատարելով Հայաստանում բարձրակարգ կրթության նոր կենտրոնի՝ «Մատենա» առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոցի ստեղծմանը:

matena
International School of Leadership
& Professional Development

«Մատենա» առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոց

2021 թվականի դեկտեմբերին դռները բացած «Մատենա» միջազգային դպրոցը ձգտում է դառնալ մասնագիտական կրթության առաջատար կենտրոն ինչպես Հայաստանի, այնպես էլ տարածաշրջանի համար: «Մատենան» մտադիր է ստեղծել ալիքային էֆեկտ՝ մասնագիտական չափորոշիչների աստիճանական բարեփոխման միջոցով:

2021 թ. ակնհայտ դարձավ այն կազմակերպության հստակ դերը, որն ունակ է մասնագիտական բարձրորակ կրթություն մատուցելու՝ Հայաստանի պետական և մասնավոր ոլորտների ղեկավարների առջև ծառացած նոր ու բարդ մարտահրավերներին դիմակայելու համար: Ղեկավարների մասնագիտական զարգացման կրթությունը Հայաստանում թերզարգացած էր, և մասնագետների մեծ մասը պարզապես մասնագիտական վերապատրաստում էր փնտրում արտասահմանում: Այս «ստատուս քվոն» վտանգավոր էր այնքանով, որ սահմանափակելու էր Հայաստանի բարեփոխումների և զարգացման ներուժն ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ոլորտներում և ճնշելու էր Հայաստանի մասնագիտական կյանքում լավագույն փորձի տարածումը:

«Մատենայի» հիմնադիրների (IDeA բարեգործական հիմնադրամ և պրոֆեսոր Ռուբեն Հայրապետյան) գործակցության ձևավորմամբ ի հայտ է գալիս «Մատենա» առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոցի հայեցակարգը: Համագործակցելով գործընկերների լայն ցանցի հետ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում՝ IDeA-ն ժամանակ և ռեսուրսներ է հատկացնում «Մատենայի» ստեղծման համար: Այսպիսով, սա օգնում է, որ մեծ թափով մեկնարկի թիմի, ակադեմիական և խորհրդատվական խորհրդի ձևավորման, ինչպես նաև բրենդինգի և զարգացման գործընթացը:

Այս կերպ հեշտացնելով վաղ փուլերում հաղորդակցության կապը Հայաստանի և հայկական սփյուռքի բարձրակարգ մասնագետների հետ՝ «Մատենան» իր առաքելությունն առաջ է մղում շատ ավելի արագ, քան սպասվում էր: Շատ արագ ձեռք է բերվում բարձրակարգ ու փորձառու փորձագետների բազա՝ ներգրավելով բիզնեսի և պետական կառավարման թեհայրենական,թեարտասահմանյան հայտնի ղեկավարներին, որոնք կարող էին հիբրիդային տեսակետ առաջարկել ազգային և միջազգային լավագույն փորձի վերաբերյալ: IDeA-ի կողմից «Մատենային» աջակցությունը՝ կառավարության ներգրավմամբ, նպաստում է նաև «Մատենայի»առաջարկած լրջության և որակի երաշխավորման նկատմամբ վստահության աճին:

«Մասնակցությունը «Մատենա» ծրագրերին կնպաստի ոչ միայն անհատական առաջնորդական կարողությունների զարգացմանը, այլ նաև կազմակերպությունների և համայնքների վերափոխմանը»:

Տիգրան Մնացականյան, *«Մատենայի» ակադեմիական տնօրեն:*

Մոսկվայի «Սկոլկովո» կառավարման դպրոցի հետ կնքած փոխըմբռնման հուշագրով սկիզբ է դրվում մեկնարկային ծրագրերի արդյունավետ համաստեղծմանը: Սրան արագորեն հաջորդում են հետագա գործակցությունները միջազգային բիզնեսի և կառավարման բարձրագույն դպրոցների հետ, այդ թվում՝ Ստոկհոլմի տնտեսագիտության դպրոցի (Շվեդիա), Լոզանի Կառավարման զարգացման միջազգային ինստիտուտի (IMD բիզնես դպրոց, Շվեյցարիա), Բեռլինի Կառավարման և տեխնոլոգիաների եվրոպական դպրոցի (ESMT Berlin, Գերմանիա), Մոնրեալի բիզնես դպրոցի (HEC Montreal, Կանադա) և Մադրիդի IE բիզնես դպրոցի (Իսպանիա):

Թեպետ IDeA-ն էր նախնական ֆինանսավորում հատկացրել «Մատենային», սակայն վերջինիս առաքելության կարևորության լայն ճանաչելիությունն արագորեն արձագանք է գտնում խոշոր դոնորների շրջանում, որոնք էլ հետագայում մեծ նվիրատվություններ են անում: Լինելով վարձավճարների վրա հիմնված՝ «Մատենան» ֆինանսական առումով արդեն դարձել է ինքնապահոված, ինչն էլ հենց ի սկզբանե եղել էր նրա թիրախը: Այնուամենայնիվ, «Մատենան» նաև ձգտում է այնպես անել, որ վարձավճարը խոչընդոտ չդառնա հայաստանյան ղեկավարության կամ առաջնորդության տաղանդի համար: Սա էլ հաշվի առնելով՝ դպրոցը սկսել է կրթաթոշակների համար ծրագրեր մշակել, ինչն էլ այն կդարձնի ավելի հասանելի:

«ՄԱՏԵՆԱՆ» ԱՆՄԻՋԱՊԵՍ ԳՈՐԾԻ Է ԱՆՑՆՈՒՄ

Իր դռները բացելուց կարճ ժամանակ անց «Մատենան» գործարկում է իր առաջին երկու կրթական ծրագրերը՝ բիզնեսի և պետական կառավարման ոլորտների համար: Երկու ծրագրերի մեկնարկի մասին հայտարարվում է Մատենադարանում անցկացված միջոցառման ժամանակ: Վայրի ընտրությունը խորհրդանշական էր. դպրոցի անունը ծագում է «մատեան» («մատենա» - գիրք) բառից, ինչն էլ իր հերթին մարմնավորում է կրթության հանդեպ հայ ժողովրդի ունեցած պատմական ձգտումը:

Այս ծրագրերը, որոնք մշակվել են համատեղությամբ և իրականացվել Դիլիջանում, Երևանում և Մոսկվայում, բացառիկ են իրենց բովանդակությամբ և բաղադրիչներով: Ծրագրերի վերջնական նպատակն է մասնակիցներին տալ այնպիսի հմտություններ և գործիքակազմ, որոնց միջոցով նրանք կկարողանան անհրաժեշտ փոփոխություններ իրականացնել իրենց կազմակերպություններում և համայնքներում: Այս դասընթացի առաջին խումբը բարձր ներկայացուցչական էր, ինչն էլ ընդգծում է «Մատենայի» տեղական նշանակությունը:

«Կարծում եմ՝ ծրագիրը վերափոխեց մասնակիցներից շատերին ու գերազանցեց սպասելիքները»:

Տաթևիկ Զանոյան, *Էվոկաբանկի խորհրդի անդամ և կադրերի բաժնի ղեկավար:*

«Սա գործնական, մտածելու տեղիք տվող ծրագիր էր, որը ոգևորեց ինձ և ստիպեց ինձ զգալ շատ ավելի ազդեցիկ՝ բազմաթիվ գործուն միջոցների շնորհիվ, որոնք ես կարող էի անմիջապես կիրառել»:

Գրիգորի Մարտիրոսյան, *Adobe-ի գլխավոր կառավարիչ:*



Հետաքրքված՝ ես FAST-ով և նրա աշխատանքով, այցելի՛ր
www.matena.am

Դիլիջանի միջազգային քոլեջ

IDeA-ն Դիլիջանի միջազգային քոլեջի (United World College Dilijan) հպարտ աջակիցն է: Դիլիջանի քոլեջը բացվել է 2014 թվականին. այն Հայաստանի առաջին միջազգային դպրոց-պանսիոնն է, որն առաջարկում է 16-19 տարեկան ուսանողներին միջազգային բակալավրիատի ծրագիր: Քոլեջը աշխարհի 18 դպրոցներից մեկն է, որը ներառված է «Աշխարհի Միացյալ Քոլեջներ» շարժման մեջ, որի նպատակն է «կրթությունը դարձնել ուժ՝ միավորելու մարդկանց, ազգերին և մշակույթները հանուն խաղաղության և կայուն ապագայի»:

IDeA-ն Դիլիջանի միջազգային քոլեջը համարում է գործընկերների վստահելի ցանցի մի մաս, որը կարող է մոբիլիզացվել ընդհանուր նպատակների համար: Սա ակնհայտ դարձավ 2021 թվականին քոլեջի կողմից առաջին «Ավրորա. Գործընկերություն՝ հանուն Արցախի» երկխոսության հյուրընկալմամբ: Քոլեջը լիովին անկախ է և, հետևաբար, IDeA-ի նյութական օգնության կարիքը չունի, թեև մեր հիմնադրամը շարունակում է աջակցել նրա զարգացմանը՝ մեր գաղափարակիցների ու գործընկերների հետ կապի միջոցով:

«Արդյունքի հասնելու համար մենք շատ աշխատանք ունենք անելու և կանենք հնարավորը, որ հաջողության հասնենք: Վստահ եմ, որ Սամսունգի հետ մեր գործակցությունը նոր էջ է բացում Հայաստանի զարգացմանը նպաստելու մեր կարողության մեջ»:

Գաբրիել Աբաղ Ֆերնանդես, *UWC Դիլիջանի միջազգային դպրոցի տնօրեն:*

Դիլիջանի քոլեջի ամենավերջին նշանակալից նախաձեռնություններից մեկն ուղղված է հայ երեխաների տաղանդի բացահայտմանն ու հմտությունների զարգացմանը, այն է՝ Samsung Electronics-ի աջակցությամբ քոլեջում 2022 թվականի սկզբին բացվելու է Սամսունգ ինովացիոն կամպուսը: Այս կենտրոնը հագեցած է լինելու գերժամանակակից բարձրակարգ սարքավորումներով: Այն առաջարկում է 25 համակարգչային կայան, խելացի գրատախտակներ և այլ սարքեր, որոնք անհրաժեշտ են առցանց և անհատական ուսուցման համար՝ երիտասարդների թվային գրագիտության, սովորելու կարողությունների, ստեղծագործելու և երևակայության զարգացման նպատակով: Կամպուսը նպատակաուղղված է խթանելու երիտասարդների ապագա հետաքրքրությունը բջջային ծրագրավորմամբ զբաղվելու համար: Այն առաջարկում է «արժանիքների վրա հիմնված եռամյա ծրագիր»՝ տարեկան նախատեսված 100 հայ երեխայի համար: Դիլիջանի միջազգային դպրոցը սերտորեն գործակցում է Դիլիջանի համայնքային կենտրոնի հետ՝ 20 տեղացի ուսանողների համար առաջարկելով վերապատրաստում, որը նախատեսված է հենց սկսնակների համար: Պայմանն է, որ մասնակիցներից առնվազն տասն լինեն Դիլիջան համայնքից:

«Ես այստեղ չէի լինի, եթե Միացյալ Աշխարհի Քոլեջներ շարժումը (UWC) այստեղ չլիներ… Այստեղ հարցն ամենևին էլ ուսումնական պլանը չէ, այլ այն մարդիկ, որոնց հանդիպում եք… Առանցքային եզրահանգումն այն է, որ UWC-ը համագործակցային է, ենթադրվում է, որ բոլորը պետք է առաջնորդ լինեն, բայց նաև բոլորն առաջնորդ են միասին: Շնորհակալություն UWC-ին՝ մեզ ոգեշնչելու համար…»:

Յեպե Ստրենդս, *Դիլիջանի միջազգային քոլեջի 2018թ. շրջանավարտ և «Շրջանավարտները՝ գործողության մեջ» 2021թ. մրցանակակիր:*

ԱՇԽԱՐՀԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆՆ՝ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Դիլիջանի միջազգային քոլեջն ունի 220 ուսանող ավելի քան 80 երկրից, իսկ ակադեմիական անձնակազմի անդամները 15 երկրից են: Այս միջազգային բազմազան հանրությունն աշխատում է ավելի խաղաղ, արդար և կայուն աշխարհի համար՝ կյանքի որակը բարձրացնող խիստ կրթության միջոցով, որը հիմնված է ակադեմիական բարձր չափանիշների և միջմշակութային ամուր փոխըմբռնման վրա:

Դիլիջանի միջազգային քոլեջը Հայաստանին առաջարկում է մուտք դեպի առաջատար կրթական կենտրոնների համաշխարհային ցանց: Այսպիսով, մինչև 2021 թվականի վերջը, ընդհանուր առմամբ, 160 հայ ուսանողներ են մուտք գործել համաշխարհային դասակարգման կրթության ասպարեզ՝ Միացյալ Աշխարհի Քոլեջների շարժման (UWC) անդամ այլ հաստատություններ՝ ընդլայնելով աշխարհի մասին իրենց իրազեկվածությունն ու զարգացնելով նոր գիտելիքներ և հմտություններ, որոնք նրանք կառաջարկեն որպես Հայաստանի քաղաքացիներ:

Հայաստանում սովորող օտարերկրացի ուսանողներն էլ, որոնք իրենց կյանքի ձևավորման ամենակարևոր տարիներից երկուսն անցկացնում են Հայաստանում, հաճախ այստեղ ներդրում են անում ՝ օգտագործելով իրենց տաղանդը և սովորելով վարձահատույց լինել: 2021 թվականին դանիացի շրջանավարտ Յեփե Ստրանդսն արժանացավ Դիլիջանի միջազգային քոլեջի «Շրջանավարտները՝ գործողության մեջ» մրցանակին: Նրա ուղին վառ կերպով արտացոլում է Դիլիջանի քոլեջի առաքելությունը՝ համաշխարհային մակարդակի կրթության միջոցով խթանելու Հայաստանի զարգացումը: Ավարտելով 2018 թվականին՝ Յեփեն նախընտրեց ավելի երկար մնալ Հայաստանում ու ստեղծել ՀԿ, որը մոբիլիզացնելու էր կամավորներին՝ Ծաղկունք գյուղի երեխաների հետ աշխատելու համար: Այդպիսով, նա փորձում է վերացնել գիտելիքի բացթողումները և ամրապնդել աշխարհի երիտասարդների միջև կապերը և՛ գործակցային նախագծերի միջոցով, և՛ որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի Գլոբալ Շեյփերս համայնքի անդամ:

Հետաքրքրված ես UWC Դիլիջանի միջազգային քոլեջով, այցելի՛ր
www.uwcdilijan.org

2021

ՄԵՐ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԾՆՈՐՀԻՎ

Հայերի՝ գոյատևելու, պայքարելու և, ի վերջո, բարգավաճելու կարողությունը մեր լինելիության անբաժան մասն է: Մեր ժառանգության և մշակույթի հանդեպ հպարտությունը պետք է դրսևորվի մեր զարգացման ջանքերի միջոցով: Սա նշանակում է զբոսաշրջության զարգացման համար հնարավորություններ ստեղծել՝ մեր պատմության ու ժառանգության պահպանման և դրանք աշխարհին բացելու և ներկայացնելու միջոցով: Դա նաև նշանակում է ներառական քաղաքային տարածքների զարգացում՝ հարգելով այնտեղ ապրող թե հին, թե նոր սերունդներին, ինչպես նաև երաշխավորելով, որ այդ միջավայրը վայելելու են նաև գալիք սերունդները:

Զբոսաշրջությունը, քաղաքաշինությունը և մշակութային ժառանգությունը ընթանում են ձեռք ձեռքի տված: 2021 թվականին IDeA-ն աջակցել է բոլոր երեք ոլորտներում գործող նախաձեռնություններին՝ միաժամանակ խրախուսելով էկոլոգիական մտածելակերպի զարգացումը երիտասարդների շրջանում, որոնց վիճակված է տնօրինել Հայաստանի ապագան:

Զբոսաշրջության և քաղաքաշինության հիմնադրամ (TUF)

TUF | TOURISM AND URBANISM FOUNDATION

Զբոսաշրջության և քաղաքաշինության հիմնադրամը մի հարթակ է, որն օգնում է զարգացնել քաղաքային միջավայրն ու ենթակառուցվածքները Հայաստանի քաղաքներում և գյուղերում: Այս նպատակի համար այն փնտրում, գտնում է կայուն նախաձեռնություններ՝ Հայաստանի համար երկարաժամկետ սոցիալ-տնտեսական ազդեցություններով՝ միաժամանակ աշխատելով հայկական ինքնության պահպանման ուղղությամբ:

Հիմնադրամն ունի բազմաբնույթ նախագծերի ու ծրագրերի մշակման և իրականացման ապացուցված փորձ՝ տարբեր մասշտաբների և ամբողջ երկրով մեկ: 2021 թվականին IDeA-ն աջակցել է հիմնադրամի կողմից մշակված և իրականացվող նախաձեռնություններին, որոնք նվիրված են Դիլիջանին և Գյումրիին:

Դիլիջանի զարգացման ծրագիր

Դիլիջանի զարգացման ծրագիրը նպատակ ունի ստեղծելու հարմարավետ և դրական քաղաքային միջավայր Դիլիջանի բնակիչների և հյուրերի համար: Այս ծրագրի շրջանակում հիմնադրամը ձգտում է բարելավել տեղաբնակների կյանքի որակը և սոցիալ-մշակութային կրթությունը՝ տեղական նախաձեռնությունների և միջոցառումների մեջ ներգրավելու հնարավորություններ ստեղծելու միջոցով:

BOLOROV

2021 թվականին հիմնադրամը գործարկեց BOLOROV սոցիալական հարթակը, որը միավորում է բոլոր նրանց, ովքեր ձգտում են Հայաստանում դրական փոփոխություններ անել: Հարթակը առաջարկում է նախաձեռնություններ՝ տալով նվիրատվությունների հնարավորություն նրանց, ովքեր ցանկանում են օժանդակել այդ փոփոխություններին: Դիլիջանի նոր եկեղեցու կառուցումն այդ նախաձեռնություններից առաջինն է: Ակնկալվում է, որ նոր եկեղեցու կառուցումը կհամալրի Դիլիջան քաղաքի զարգացման նախագիծը: Ավելին՝ եկեղեցու կառուցման նպատակն է վերակենդանացնել քաղաքի հոգևոր կենտրոնը՝ հաջակցություն տեղի կրոնական կյանքին. մի գործ, որի շուրջ BOLOROV-ը ձգտում է համախմբել նույն հետաքրքրություններն ունեցող տեղական, ազգային ու միջազգային հասարակություններին:

«Օրեցօր, քար առ քար մենք ականատես ենք լինում, թե ինչպես է մեր Սուրբ Եկեղեցին տեսք ստանում: Ամեն նոր օրը մեզ ավելի ու ավելի է մոտեցնում շինարարական աշխատանքների ավարտին: Անհամբերությամբ սպասում ենք այն պահին, երբ Դիլիջանի երկնքում կողողանջեն նոր եկեղեցու զանգերը՝ ավետելով նոր Սուրբ նստավայրի և Դիլիջանի հոգևոր կյանքի վերածննդի մասին»:

Տեր Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյան, *Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ:*

BOLOROV-ը Դիլիջանի եկեղեցու կառուցման գործին ներգրավում է ինչպես Դիլիջանի բնակչությանը, այնպես էլ աշխարհում ցանկացած մեկին, որը հետաքրքրված է հայկական կրոնով, ճարտարապետությամբ կամ մշակութային կյանքով: Այն հնարավորություն է ընձեռում բոլորին՝ ֆինանսական ներդրում ունենալ: 100 ԱՄՆ դոլարը գերազանցող ներդրողի անունը կփորագրվի Դիլիջանի եկեղեցու Աջակցության քարի վրա: Այս նպատակի համար նախատեսված է 8000 քար:

Ի վերջո, եկեղեցու կառուցման նպատակն է նպաստել Դիլիջանի զարգացմանը՝ որպես Տավուշի մարզի մշակութային, կրթական, առողջապահական և զբոսաշրջության կենտրոնի:

ԿԵՆԴԱՆԻ ՊԱՀԵԼՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՎԱՏԸ. ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՐ

IDeA-ն մեծ ուշադրություն է դարձնում կրոնի դերին՝ հայկական ինքնության ձևավորման և հայ ժողովրդի գոյատևման գործում: Սրանով պայմանավորված էլ՝ հպարտ է խոնարհաբար աջակցելու կրոնական հաստատություններին, որոնք կենդանի են պահում այս հավատքը: 2021 թվականին այս աջակցության շրջանակում էին Հայ առաքելական եկեղեցու ղեկավար մարմինը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, և Հայ Եկեղեցու հայեցակարգային հարցերի գրասենյակը:

Այսուհանդերձ, IDeA-ի կողմից 2021 թվականին աջակցվող ամենախոշոր նմանատիպ ծրագրերից մեկը Դիլիջանի նոր եկեղեցու կառուցումն էր: Պատմականորեն հինգ եկեղեցու հայրենիք դարձած, որոնցից յուրաքանչյուրը ժամանակի ընթացքում ավերվել է տարբեր իրադարձությունների պատճառով, Դիլիջանը մոտ մեկ դար եղել է առանց հոգևոր կենտրոնի: Հենց այս պատճառով էլ հավատավոր դիլիջանցիները ստիպված են ժամերգությունների մասնակցել «Հին Դիլիջան» հյուրանոցային համալիրի շինություններից մեկում: Այս հանգամանքով էլ պայմանավորված տարիներ առաջ սկսվում են նոր եկեղեցու կառուցման աշխատանքները, որը գտնվում է Դիլիջանի կենտրոնում և նախատեսված է 300 հավատացյալների համար: 375 քմ տարածքով եկեղեցու շինարարությունը սկսվել է 2019 թվականին և շարունակվել է մինչև 2021 թվականը: Եկեղեցու կառուցումը ոչ միայն նպատակ ունի աջակցելու տեղացիներին կրոնական ծեսերի պահպանման առումով, այլ նաև վերակենդանացնելու Հայաստանի հոգևոր և մշակութային ժառանգությունը, բարելավելու քաղաքային ենթակառուցվածքները և բարձրացնելու կյանքի որակը: 2021 թվականին այս նախագիծը նպատակ ուներ մեծացնելու ինչպես Հայաստանի քաղաքացիների, այնպես էլ հայկական սփյուռքի ներգրավվածությունը եկեղեցու կառուցման գործում. խնդիր, որը, ի վերջո, իրականացվեց BOLOROV-ի միջոցով:

KotoPes անասնաբուժական կայան

KotoPes-ը թափառող շների ստերջացման և ամորձատման անասնաբուժական կայան է Դիլիջանում: Հիմնադրվել է 2021 թվականին «To Live» հիմնադրամի հետ համատեղ: KotoPes-ը մի ծրագրի մաս է, որի նպատակն է միջոցներ հայթայթել՝ քաղաքային համայնքներում թափառող կենդանիների պոպուլյացիաները մարդասիրաբար կառավարելու համար: Թափառող շները Հայաստանի մեծ ու փոքր քաղաքներում հանրային անվտանգության և, հետևաբար, զարգացման խնդիրներ են ստեղծում: Դա հատկապես դրսևորվում է Դիլիջանում, որը մինչև վերջերս չուներ անասնաբուժական կլինիկա:

KotoPes անասնաբուժական կայանը հագեցած է թափառող շների պոպուլյացիայի կառավարման համար անհրաժեշտ գործիքներով ու սարքավորումներով և ղեկավարվում է Երևանից ժամանած պրոֆեսիոնալ անասնաբույժի կողմից: Մինչև օրս 50 թափառող շներ ստերջացվել ու ամորձատվել են, ինչպես նաև համարակալվել: Այս ծրագիրը, որի շահառուները են ինչպես Դիլիջան համայնքը, այնպես էլ հենց կենդանիները, նաև կրթական հիմք ունի. այն ձգտում է զգոնացնել մարդկանց՝ թափառող կենդանիներին մարդկայնորեն ու առանց բռնության վերաբերվելու անհրաժեշտության տեսանկյունից՝ այս կերպ խրախուսելով թափառող կենդանիների հանդեպ հոգատարության մշակույթը:

Հետաքրքված ես, այցելի՛ր
www.kotopes.am

Գյումրու զարգացման ծրագիր

Գյումրի քաղաքը ռազմավարական դարպաս է ու կենտրոնական կետ՝ Հայաստանի հյուսիսային հատվածի զբոսաշրջության զարգացման համար: Դիլիջանի հետ միասին Գյումրին այն հինգ ռազմավարական վայրերից մեկն է Հայաստանում, որը հիմնադրամի՝ զբոսաշրջության ու քաղաքաշինության ավելի մեծ տեսլականի առանցքում է:

Գյումրու Բարեկամության այգու վերականգնումը հիմնադրամի՝ Գյումրու զարգացման ծրագրի առանցքային նախագծերից է: Այն նաև Գյումրիում պետություն-մասնավոր հատված գործընկերության մոդելի և սոցիալ-տնտեսական զարգացման փորձնական ծրագիր է: Թեև այս նախագծի վրա աշխատանքները սկսվել են դեռևս 2015-ին, սակայն միայն 2020-ի վերջերին աշխատանքի պտուղները սկսեցին աստիճանաբար շոշափելի դառնալ: 2021 թվականն էլ նշանավորվեց ծրագրի շինարարական փուլի մեկնարկով:

«Կառավարություն-Հիմնադրամ-Համայնք համագործակցության այս մոդելը հիանալի միջավայր կստեղծի Գյումրիում, որը կդառնա ևս մեկ լուրջ գրավչություն տեղացի և արտասահմանցի հյուրերի համար և լավ առիթ՝ այցելելու Գյումրի»:

Վահան Քերոբյան, *ՀՀ էկոնոմիկայի նախարար:*

ԳՅՈՒՄՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՅԳԻ. ՆՈՒՅՆ ԱՅԳՈՒՆ՝ ՆՈՐ ԿՅԱՆՔ

Գյումրու Բարեկամության այգին, որը գտնվում է քաղաքի կենտրոնական թաղամասերից մեկում, կառուցվել է 1960-ականներին, սակայն ավերվել է 1988-ի ավերիչ երկրաշարժի հետևանքով: Այգու վերականգնման համար ձեռնարկվել են միջոցներ, որոնք կապահովեն այգու պատմական և բնական առանձնահատկությունների պահպանումը և միաժամանակ կստեղծեն նոր տարածքներ՝ քաղաքի նորօրյա բնակիչների համար:

Վերականգնված այգին ոչ միայն կդառնա գյումրեցիների և քաղաքի հյուրերի համար բարեկամություն ու վերածնունդ խորհրդանշող նոր հանրային վայր, այլև կլինի երախտագիտության արտահայտում այն երկրներին, որոնք աջակցել են քաղաքի վերականգնմանը 1988 թվականի երկրաշարժից հետո: Այգում շուրջտարի կանցկացվեն միջոցառումներ, ինչպես նաև կրթական ծրագրեր, որոնք ցանկացողներին հնարավորություն կտան նոր մասնագիտություններ և հմտություններ յուրացնելու:

Բարեկամության և վերածննդի վրա կենտրոնացվածությունը նաև իր խորքային արտացոլումն է գտել այգու դիզայնի վրա, ինչը միանգամայն նոր քայլ է դրա հասանելիությունն ապահովելու տեսանկյունից: Այգում կլինեն սպորտային մեծ հրապարակ, միջոցառումների բեմ, այգեգործության դպրոց և ժամանցի այլ ենթակառուցվածքներ, որոնք նախատեսված են ապահովելու բոլոր տարիքային խմբերի, կարողությունների և խավի մարդկանց հետաքրքրությունները: Այն նաև կլինի առաջին այգին Հայաստանում, որը լիովին կհամապատասխանեցվի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին, ներառյալ մանկական խաղահրապարակը, որը հարմարեցված կլինի ցանկացած երեխայի համար: Ավելին, այգու կայունության մոդելն ուղղված է նրան, որ հնարավորություն է տալիս տեղական փոքր բիզնեսին օգտվելու այգու ընձեռած հնարավորությունից և գործունեություն ծավալելու այն պայմանով, որ որոշակի տոկոսով կօժանդակի այգու գործառնական ծախսերին՝ իր բիզնեսի կարողությունների սահմանում: Գործունեության երրորդ տարում նախատեսվում է, որ այգին կդառնա ինքնաբավ:

2020 թվականին այգու մի քանի ռեկրեացիոն հայեցակետերի նախագծման համար հայտարարված ճարտարապետական բաց մրցույթից հետո տարին փակվեց ավարտուն դիզայնի հայեցակարգով: Սա կանաչ լույս վառեց ծրագրի պետություն-մասնավոր հատված գործընկերության շահառուների համար՝ աշխատանքը սկսելու և միաժամանակ շարունակելու կապիտալ ներգրավել 2021 թվականի ընթացքում:

> ***«Անհամբերությամբ սպասում ենք այգու բացմանը: Համոզված ենք, որ այն շատ կարևոր դեր է խաղալու քաղաքի բնակիչների կյանքում»:***
>
> ***54-ամյա Կարինե,*** *Գյումրու բնակիչ:*

Գյումրու Բարեկամության այգին նորարարական է մի շարք առումներով: Նախագիծը ոչ միայն մեծապես գործակցում է բազմաթիվ մակարդակներում, այլև նոր չափանիշ է սահմանում քաղաքային բնակավայրերի կանաչ տարածքների կայուն մոդելների նախագծման, գործարկման և իրականացման համար: Այն համագործակցել է մի շարք կառույցների հետ, այդ թվում՝ Համաշխարհային բանկի, ՄԱԶԾ-ի, Ասիական զարգացման բանկի, Հայաստանում ԵՄ պատվիրակության և Հայաստանի կառավարության:

Շատ կարևոր է նշել, որ 2021 թվականին նախագծի ամենամեծ հաջողությունը եղել է իր կարողությունը՝ ապահովելու տեղական համայնքի մասնակցությունը նախագծին, որում յուրաքանչյուր շահագրգիռ անձ գտել է իր դերը այգու կառուցման գործում: Փոքր երեխաներից և նրանց ծնողներից սկսած մինչև երիտասարդ քանդակագործներ, նկարիչներ, սթրիթ ոճի արվեստագետներ, մարզիկներ ու կանայք. յուրաքանչյուրն անջնջելի հետք է թողել այգու ստեղծման վրա: Եւ այս ամենն արվել է հանրության հետ մանրակրկիտ աշխատանքի արդյունքում, որն իրականացվել է սեմինարների, հանդիպումների և զբոսայգիներ այցելելու միջոցով: Նախագծի մշակման այս խիստ գործակցային մոտեցումն օգնել է Գյումրու Բարեկամության այգուն դառնալու մի տարածք, որը երկարաժամկետ հեռանկարում կլինի և՛ բարձր ներառական, և՛ ավելի կայուն:

Ենթակառուցվածքների պլանավորման, պայմանագրային և կանոնակարգման աշխատանքներից շատ ամիսներ անց՝ 2021 թվականի հոկտեմբերին, սկսվել է այգու շինարարությունը: Ակնկալվում է, որ այգու ենթակառուցվածքային տարրերի վրա աշխատանքները կավարտվեն մինչև 2023 թվականը, այնուհետև այգու որոշ ենթակառուցվածքներ շահագործման կհանձնվեն:

Զբոսաշրջության և քաղաքաշինության հիմնադրամի և նրա ծրագրերի, այդ թվում՝ Գյումրու զարգացման ծրագրի մասին ավելին իմանալու համար այցելի՛ր **www.tuf.foundation**

Կլիմայի փոփոխություն

Հայաստանի երիտասարդների մեծամասնությունը լավ չի պատկերացնում բնապահպանական հիմնական խնդիրները, որոնց ներկայում բախվում է աշխարհը: Ավելին, Հայաստանի կրթական համակարգը նախատեսված չէ նրանց գործնական հմտություններ առաջարկելու համար, որ կարողանան զարգացնել ու իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք ունակ են փոփոխությունները խթանելու միջոցով լուծելու բնապահպանական խնդիրները:

Climate Uturn-ը էկոլոգիական ծրագիր է, որը նախատեսված է 15-20 տարեկան պատանիների ու երիտասարդների համար: Նախագծերի վրա հիմնված ուսուցման միջոցով նրանց հնարավորություն է տրվում իրենց համայնքներն ավելի կայուն դարձնելու: Նախագծերը կենտրոնացած են հողի, ջրի և թափոնների կառավարման բարելավման վրա, այդ թվում՝ աշխարհով մեկ իրականացվող կայունության և էկոլոգիական լուծումների ուսումնասիրության փորձի փոխանցման միջոցով: Նախագծի նպատակն է մոտիվացնել և հնարավորություն տալ մասնակիցներին պաշտպանելու իրենց միջավայրը, ուղղորդելով նրանց՝ սեփական նախագծերը մշակելու և իրականացնելու, ինչպես նաև մեծացնել ազդեցությունը՝ դրամահավաքի, փորձագետներ գտնելու և լրատվամիջոցների հետ աշխատելու միջոցով: Այս ճանապարհով Climate Uturn-ը նպատակ ունի աջակցելու իր ուսանողների նախագծերին, որպեսզի դրանք դառնան ինքնակայուն ու ինքնաածախսածածկ:

Մինչև 2021 թվականը Climate Uturn ծրագիրն իրականացվում էր Հայաստանի ութ քաղաքների դպրոցներում՝ նպատակադրվելով ընդլայնվել նաև Արցախում: 2021 թվականին ծրագրի 105 մասնակից ամբողջ Հայաստանում մասնակցել է տասը կայուն զարգացման ծրագրերի, որոնք ուղղված են տեղական համայնքներում իրական բնապահպանական խնդիրների լուծմանը: Նախագծերը ներառում էին լքված ջերմոցի հիմանորոգում՝ Նոյեմբերյանում պերմակուլտուրայի ուսումնական կենտրոն դարձնելու համար, Հայաստանում առաջին տնական վերմիկոմպոստի արտադրություն՝ օրգանական թափոնները սննդանյութերով հարուստ կոմպոստի վերածելու համար, ինչպես նաև վայրի մեղուների պաշտպանության իրազեկման արշավ, ներառյալ մեղուների հյուրանոցների կառուցում, որը նախատեսված է Հայաստանի տարբեր համայնքներում բնիկ մեղուների պոպուլյացիաներին աջակցելու համար:

Այսօրվա դրությամբ՝ Climate Uturn-ի իրազեկման ջանքերը հասել են հայկական շրջակա միջավայրի մասին կրթական տեսանյութերի 350,000 դիտումի և հայ բնապահպան ձեռներեցների մասին նյութերի 20,000 դիտումի:



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՅՈՒՆ ՆԱԽԱԳԾԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Կայունության մտածողությունը դուրս է գալիս Climate Uturn-ի մոտեցման սահմաններից և մտնում բնապահպանական ծրագրավորման մշակման փուլ՝ ուղղված հենց տվյալ նախագծերի կայունությանը: Արդյունքում՝ ծրագրերն այնպես են մշակվում, որ խթանում են ուժեղ սիներգիաները և կապերն այլ պոտենցիալ աջակից կազմակերպությունների հետ, այդ թվում՝ համապատասխան ձեռնարկությունների և շահույթ չհետապնդող կազմակերպությունների, ինչպես նաև միմյանց հետ: Նման գործակցությունը նպաստում է թե ռեսուրսների, թե գիտելիքի փոխանակմանը, ինչն էլ ծրագիրն ավելի արդյունավետ է դարձնում և օգնում առավելագույնի հասցնել ազդեցությունները: Օրինակ՝ Նոյեմբերյանում պերմակուլտուրայի ուսուցման կենտրոնի ստեղծման ընթացքում ջանքեր են գործադրվել համակարգելու և փոխշահավետ հարաբերություններ ձևավորելու «Սմարթ Ֆարմ Սպիտակ», «Ֆերմերից՝ Ֆերմերին. Հայաստան», Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ինչպես նաև Climate Uturn-ի՝ հայկական տնայնագործական վերմիկոմպոստի նախագծի հետ: Բացի այդ, քանի որ Climate Uturn-ի կողմից վերահսկվող նախագծերը դառնում են ավելի կայուն և շահավետ, այդ նախագծերից ստացված շահույթի մի մասը կուղղվի ծրագրի հասանելիությունն ավելի շատ դպրոցներում, համայնքներում և, ի վերջո, ավելի շատ երկրներում տարածելու համար:

Ծանոթացի՛ր Climate Uturn-ին
Գտի՛ր մեզ Facebook-ում կամ այցելի՛ր
www.climateuturn.am

2021

ՀԱՅԱՑՔ՝ ՄԵԶՆԻՑ ԱՆԴԻՆ

Հայկական լուսավոր ապագայի տես-լականն ամրապնդվում է IDeA-ի՝ համընդհանուր բարգավաճմանն ուղղված ձգտումով: Սա մեզ հնարավորություն է տալիս նպաստելու այն նախաձեռնություններին, որոնք դուրս են հայկական աշխարհից:

2021 թվականին IDeA-ն աջակցություն ցուցաբերեց երիտասարդների հնարավորությունների ընդլայնման միջազգային Youth Time կազմակերպությանը, ինչպես նաև «Բրազավիլ» հիմնադրամին՝ շրջակա միջավայրի, առողջության և խաղաղության աֆրիկյան նախաձեռնություններին աջակցող կառույցին:

Youth Time միջազգային շարժում

Youth Time շարժումը միջազգային, շահույթ չհետապնդող, ապաքաղաքական կազմակերպություն է, որն առաջարկում է հարթակ՝ մշակույթների և սերունդների միջև երկխոսության համար: Youth Time-ի հիմնական նպատակներից է աշխարհով մեկ համախմբել երիտասարդներին մեկ տեղում՝ հիմնականում ամենամյա միջոցառումների միջոցով:

2021 թվականին Youth Time-ը տասը շաբաթվա ընթացքում անցկացրել է վեց վեբինարների շարք, որոնք նվիրված էին ամառային դպրոցի «Ապագա հմտություններ աշխատավայրում կայուն զարգացման համար» թեմային: Տարբեր ոլորտների փորձագետներն անդրադարձել են այնպիսի թեմաների, ինչպիսիք են՝ «սոցիալական նորարարությունը համակարգային փոփոխությունների ու կայունության համար» և «ռազմավարական հաղորդակցությունների ազդեցությունը բիզնեսի կայունության վրա»: Այս շարքի շրջանակում Youth Time-ը կազմակերպել է նաև քառօրյա վիրտուալ միջոցառում՝ 13 բանախոսներով, որի նպատակն էր բարձրացնել երիտասարդության իրազեկվածությունը կորպորատիվ պատասխանատվության հիմունքների վերաբերյալ: Սա մինչև օրս կառույցի կողմից երբևիցե կազմակերպված ամենամեծ իրադարձությունն է:

Թեև COVID-19-ի սահմանափակումները թույլ չէին տվել Youth Time-ին հյուրընկալել 2021 թվականի Համաշխարհային երիտասարդական ֆորումը, այնուհանդերձ, կազմակերպությունն իր ամենամյա ամառային դպրոցն անցկացրեց Սերբիայի մայրաքաղաքում՝ Բելգրադում, առաջին անգամ գործակցելով Erasmus+-ի և եվրոպական այլ կառույցների հետ: Միջոցառումը համախմբել էր շուրջ 50 մասնակցի՝ երիտասարդ աշխատողների վեցօրյա փոխանակման համար, որը ներառում էր ուսուցում, քննարկումներ և փորձագետների ելույթներ տարվա թեմայով՝ տեղեկատվություն և մեդիագրագիտություն: Թեմաներն ընդգրկել են լայն շրջանակ՝ սկսած թերի տեղեկատվությունից և ապատեղեկատվությունից մինչև արդյունավետ կարգավորում, ինչպես նաև կեղծ լուրերի ու քարոզչության հայտնաբերման մեթոդներ: Արդյունքում՝ մշակվել է «Հոդվածների ժողովածու. Մեդիագրագիտություն 2021» հրապարակումը, որը միջոցառման 33 մասնակիցների աշխատանքի արդյունքն էր: Այն նպատակ ունի աջակցելու երիտասարդների կրթությանը մեդիա տեղեկատվության և գրագիտության ոլորտներում նաև միջոցառումից դուրս:

«Բրազավիլ» հիմնադրամ

Brazzaville Foundation

«Բրազավիլ» հիմնադրամն անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը նվիրված է խաղաղության, առողջության և շրջակա միջավայրի ոլորտներում աֆրիկյան մայրցամաքի առջև ծառացած մարտահրավերների լուծումները խթանելուն և աջակցելուն:

«Բրազավիլ» հիմնադրամը Կոնգոյի ավազանի կլիմայի հանձնաժողովի (CCBC) տեխնիկական գործընկերն է և Կոնգոյի ավազանի կապույտ հիմնադրամի ստեղծման նախաձեռնողը՝ 2016 թվականին Մարաքեշում կայացած Կլիմայի փոփոխության կոնֆերանսի (COP22) ժամանակ: Այս առնչությամբ, 2021 թվականին հիմնադրամի բնապահպանական աշխատանքների մեծ մասը կենտրոնացած է եղել վերոհիշյալ հանձնաժողովի համար հաղորդակցության և քարոզչության ռազմավարության մշակմանը և կազմակերպությանն աջակցելու, Կոնգոյի ավազանի պահպանության համար Գլազգոյի կոնֆերանսում (COP26) ելույթ նախապատրաստելու վրա, այդ թվում՝ բարձր մակարդակի կլոր սեղան կազմակերպելու միջոցով: Երկիր մոլորակի երկրորդ էկոլոգիական թոքերի՝ Կոնգոյի ավազանի պահպանումը, ինչպես նաև նրա բնակչության տնտեսական և սոցիալական զարգացումը Աֆրիկայի և ընդհանուր աշխարհի խնդիրն է և պետք է միջազգային հանրության համար առաջնահերթություն դառնա:

2020 թվականի հունվարին «Բրազավիլ» հիմնադրամը Կոնգոյի, Գանայի, Նիգերի, Ուգանդայի, Սենեգալի և Տոգոյի հանրապետությունների հետ համատեղ սկսել է Լոմեի նախաձեռնությունը: Այն քաղաքական հռչակագիր է, որը պարտավորեցնում է պետություններին պայքարել կեղծ և անորակ դեղերի ապօրինի շրջանառության դեմ (FSM), վավերացնել գործող միջազգային պայմանագրերը և քրեական նոր պատժամիջոցներ սահմանել թրաֆիքինգով զբաղվողների նկատմամբ: «Բրազավիլ» հիմնադրամը՝ որպես Լոմեի նախաձեռնության տեխնիկական համակարգող, շարունակել է իր աշխատանքը այս ոլորտում 2021 թվականին: Բացի բազմաթիվ հարակից միջոցառումներին մասնակցելուց՝ այս աշխատանքը ներառում էր բարձր մակարդակի առցանց կլոր սեղանի կազմակերպում՝ «COVID-19-ի և անորակ ու կեղծված դեղագործական արտադրանքի աճող ռիսկերը Աֆրիկայում. հանրային առողջապահության և անվտանգության խնդիրը» թեմայով: Հիմնադրամը դարձել է նաև Եվրոպայի խորհրդի MEDICRIME կոնվենցիայի պաշտոնական դիտորդը:

2021 թվականին «Բրազավիլ» հիմնադրամն աջակցել է Լիբիայի գծով Աֆրիկյան միության բարձր մակարդակի կոմիտեի նախագահ Դենիս Սաս Ն'Գուեսոյին՝ լիբիական ճգնաժամի հաղթահարման համար աֆրիկյան լուծումներ գտնելու հարցում:

ՀԱՅԱՑՔՆ ՈՒՂՂԵԼՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ

Ամբողջ 2021 թ. ընթացքում IDeA-ն պահպանել է իր վճռականությունն աջակցելու և սնուցելու այն ծրագրերը, որոնք ուղղված են աշխարհասփյուռ հայերի բարգավաճումը խթանելուն՝ միաժամանակ արձագանքելով աշխարհում կատարվող արտակարգ իրադարձություններին:

Մուտք գործելով 2022 թվական՝ IDeA-ն կպահպանի այս ռազմավարական և վճռական ուղղվածությունը: Ընդ որում՝ մենք անհամբերությանբ կսպասենք տեսնելու, թե ինչպես է մեր գործընկերների աշխատանքը շարունակում զարգանալ ու միավորվել՝ ազդեցություն գործելով տարբեր մասշտաբների ու աշխարհագրական տարբեր ուղղությունների վրա:

Շրջելով հաջորդ էջը

Մենք անհամբերությամ սպասում ենք, որ Գյումրու զարգացման ծրագիրը մինչև 2022 թվականի ավարտն արդեն անցած կլինի պետություն-մասնավոր հատված հաջողված գործակցության վերջին փուլերը: Ակնկալվում է, որ մինչև 2022 թվականը տեղադրված կլինեն Բարեկամության այգու ենթակառուցվածքային տարրերը, իսկ այգու որոշ հատվածներ արդեն պատրաստ կլինեն հանրային օգտագործման համար:

Մենք նաև անհամբերությամբ կսպասենք Դիլիջանի եկեղեցու շինարարության շարունակությանը: Ի լրումն այս նախագծի՝ IDeA-ն անհամբերությամբ սպասում է Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամի նոր ու գրավիչ «Հայ վարպետ» նախաձեռնությանը, որը նախատեսված է ճանաչելու, հանրահռչակելու և խթանելու ավանդական արհեստները, որոնք Հայաստանի հարուստ ձեռարվեստի ժառանգության մաս են: Այսօրինակ նախաձեռնությունը հնարավորություն է տալիս շեշտելու Հայաստանի մշակութային ժառանգության արժեքը և, որ ամենակարևորն է, արժևորելու դրանք կենդանի պահողներին, որոնք աշխատում են այնպիսի նախագծերի վրա, ինչպիսին է, օրինակ, Դիլիջանի եկեղեցին:

2021 թվականի ավարտին մեկնարկում է «Ավրորա» մրցանակի դափնեկիրների գործողությունների նոր շրջափուլը: «Ավրորա» մրցանակի դափնեկիր Ջուլիեն Լուսենգեի շնորհիվ 2022 թվականին ակնկալվում է Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում կանանց, գենդերային բռնության զոհերին և բռնի տեղահանվածների աջակցության աշխատանքների հետագա խթանումը, ինչպես նաև 14 նոր նախագծերի իրականացումը՝ ուղղված Արցախի ժողովրդի անհետաձգելի կարիքները բավարարելուն: 2022 թվականի «Ավրորա» մարդասիրական մրցանակի հաղթողի ընտրությունը՝ 62 երկրներից 633 անվանակարգերում, ամենայն հավանականությամբ, բավական բարդ է լինելու:

Շարունակելով նոր ձեռնարկումները

IDeA 2022 թվականին անպայմանորեն կշարունակի նոր գործընկերներին աջակցել:

Քանի որ ՀԵՆԱՐ-ն ամրապնդում է իր պաշտոնական և արդյունավետ աշխատանքային հարաբերությունները ՀՀ առողջապահության նախարարության և Առողջապահության ազգային ինստիտուտի հետ, IDeA-ն ակնկալում է, որ այն կշարունակի զարգանալ որպես վստահելի գործընկեր առաջնային բուժօգնության վերափոխման գործում: Ակնկալվում է, որ սա կներառի առաջնահերթություն համարվող ոլորտները խթանող նախաձեռնությունների մշակումը, ներառյալ վերականգնողական պայմանները բարելավելու և թվային առողջապահության պորտալի զարգացումը:

Վերահսկելով «Մատենայի» առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոցի մեկնարկը և արագ զարգացումը՝ IDeA-ն անհամբերությամբ սպասում է առաջին համատեղ ծրագրերի մեկնարկին՝ գործակցելով միջազգային այլ առաջատար բիզնես դպրոցների հետ: Առանձնակի ոգևորությամբ կսպասենք դպրոցի ծրագրերի իրականացման, այն է՝ Թվային փոխակերպման կենտրոնի ստեղծման մեկնարկին, որը թվային փոխակերպման համաշխարհային լավագույն փորձը կտարածի Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Անշուշտ, նման նախաձեռնությունը կընդգծի «Մատենայի» դիրքը համաշխարհային բիզնեսի և կառավարման տենդենցների առաջնագծում, ինչը կնպաստի նրա վերելքին՝ որպես տարածաշրջանային գերազանցության կենտրոնի:

Եւ շատ ավելին…

IDeA-ն անհամբերությամբ սպասում է այս ամենին և ավելիին:

Մենք ցանկանում ենք ևս մեկ անգամ հայտնել մեր խորին ու անկեղծ երախտագիտությունն ու հիացմունքը մեր անգնահատելի ընկերներին, գործընկերներին ու աջակիցներին, որոնք հնարավոր են դարձնում մեր ազդեցությունը: Թող որ 2022 թվականը շարունակվի նույն զգուշավոր լավատեսությամբ, որով ավարտվում է 2021 թվականը: Եվ թող մեզնից յուրաքանչյուրը խաղա իրեն բաժին հասած դերը:

IDeA | Բարեգործական Հիմնադրամ

Հրապարակված է
IDeA Բարեգործական հիմնադրամի կողմից
© IDeA, 2021

Մարշալ Բաղրամյան պող. 6,
Երևան 0019, Հայաստան
+374 60 700 800

info@idea.am
www.idea.am